

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ԷՎ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ



9(47.925)

13998

A-70

Uaupt und f

Sperrung der

zu nur don

902.7 (47.925)

Ա-70

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄՏՈՒԳԱՄԻ Է 1001 Թ

A II
39978

43998

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԷԿ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ



Պատասխանատու խմբագիր Գ. ՂԱՓԱՆՅԱՆ

Б. АРАКЕЛЯН

МИГРАЦИОННАЯ ТЕОРИЯ
И ВОПРОС О ПРОИСХОЖДЕНИИ
АРМЯНСКОГО НАРОДА

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.

Հին ժամանակներում էլ մարդկանց ուշադրությունից չի վրիպել այնպիսի կարևոր պատմական հարց, որպիսին է ժողովուրդների և նրանց լեզուների առաջացումը։ Մակայն հնում այդ հարցը կարող էր միայն առասպելական բացատրություն տալ։

Հայտնի է բաբելոնյան աշտարակաշինության առասպելը, որի համաձայն, իբրև թե, կար ժամանակ, երբ մարդիկ պատկանում էին մի ցեղի, խոսում էին մի լեզվով և ապրում էին մի երկրում (Բաբելոնում), բայց հետո նրանց լեզուները խառնվեցին, և նրանք էլ ցրվեցին երկրի երեսին, առաջացնելով տարբեր ժողովուրդներ և նրանց տարբեր լեզուները։

Մի առասպել էլ հորինված է եղել հայ ժողովրդի առաջացման վերաբերյալ, որը գրի առնելով մեզ են հասցրել Մովսես Խորենացին և Սեբեոսը։ Ըստ այդ ավանդության հայերը սերվել են Բաբելոնյան Բել ըռնակալի դեմ ապստամբած և Հայաստան գաղթած Հայկ նահապետից։

Այդ առասպելով առաջնորդվել են դարեր շարունակ, որովհետև նա չէր հակասում Աստվածաշնչին, և միջնադարյան կրոնական սխոլաստիկայի թագավորության շրջանում ուրիշ տեսություն չէր էլ կարելի ստեղծել։

Վրացական ժողովրդական ավանդությունն էլ պատմում է, թե Հայկը և Քարթլոսը եղբայրներ են եղել։ Հայկից առաջացել են հայերը, իսկ Քարթլոսից՝ քարթվեղները (վրացիները)։

Հարյուր տարուց ավելի է անցել, ինչ թյուր առասպելներն այլևս չեն բավարարում գիտության պահանջները։

Ժողովուրդների, նրանց թվում և հայերի առաջացման վերաբերյալ նոր տեսությունների երևան գալը կապված է 19-րդ դարի հնդերոպական լեզվաբանության հետ։ Գերմանական գիտնական Ֆրանց Բոպպի՝ 1833 թ. լույս տեսած «Համեմատական

քերականություն» աշխատությամբ սկզբնավորվեց հնդերոպական լեզվաբանությունը: Աշխարհում գոյութիւն ունեցող լեզուները կապվիլով ցեղերի և ցեղախմբերի հետ, բաժանվեցին ժիքանի լեզվական ընտանիքների, դրանցից էլ ամինաաչքի ընկնողը, քաղաքակիրթը և զարգացման ու տարածման առավել արժանին համարվեց հնդերոպական լեզվական ընտանիքը, որի ուսումնասիրությամբ էլ տարվեց 19-րդ դարի եվրոպական լեզվաբանությունը: Մշակվեցին մի շարք սկզբունքներ, որոնք քառացած դոգմաների վերածվեցին:

Իբրև թե հնագույն ժամանակներից ի վեր եղել է մի հնդերոպական նախացեղ, որը խոսել է մի նախալեզվով (կամ նախամայր լեզվով) և ապրել է իր նախահայրենիքում: Հետագայում, իբրև թե, այս նախացեղի ճյուղավորման հետևանքով նախամայր լեզուն էլ ճյուղավորվել է, առաջացնելով դուստր լեզուներ, որոնք նախացեղից առաջացած ժողովուրդների աստիճանական միգրացիայի (գաղթի) եղանակով տարածվել են աշխարհի երեսին՝ բռնելով Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև Իսլանդիայի արևմտյան ափերը:

Եթե «հնդերոպական» անվանված ժողովուրդները առաջացել են մի ընդհանուր նախացեղից և նրանց լեզուներն էլ մի ընդհանուր նախամայր լեզվից, ապա այդ ժողովուրդների և նրանց լեզուների մեջ դոյութիւն ունեցող ազգակցութիւնը ուղիղ գծով առաջանում է նախացեղից և նախալեզվից: Դուրս է գալիս, որ լեզուները ոչ թե առաջանում են հասարակության և հասարակական հաղորդակցության ու մտքի զարգացման հետևանքով, այլ ծնվում են նախամայր լեզվից: Համաձայն այս ծննդաբանության հնդերոպական լեզվական ընտանիքին պատկանող լեզուների բառարմատների և քերականական նմանութիւնները գալիս են նախալեզվից: Նրանք ստեղծվել են մեկընդմիշտ և կարող են միայն քանակական էվոլուցիայի ենթարկվել: Բառամթերքի և քերականության որակական փոփոխութիւնները բացառվեցին: Հնդերոպական համարված լեզուների ոչ հնդերոպական արմատները, քերականական ձևերը համարվեցին օտարածուտ պարզ փոխառութիւններ:

Հնդերոպական լեզվաբանութիւնը ուսայական հիմքի վրա է կառուցված: Առանձին ինքնակա ուսանների հետ կապվեցին լեզվական ընտանիքները, որոնք իրար հետ խաչաձևվել չեն կարող, ինչպես խաչաձևվել չեն կարող այդ ինքնակա ուսա-

ները Այդ խաչաձևմամբ առաջացող սինթեզը և ամեն մի շեղում կամ տարբերություն «հնդեւրոպական» օրինաչափություններից քաջատրվեց ազդեցությունների և պարզ փոխառությունների դեհեկարանությունը:

Հնդեւրոպական լեզվաբանության տեսական սկզբունքները բուրժուական հասարակության թագավորության պայմաններում մի շարք հասարակական գիտությունների՝ պատմության, հնագիտության, ազգագրության, մարդաբանության, արվեստի, հոգևոր կուլտուրայի պատմության, նույն ուղիով զարգանալու ելակետը հանդիսացան:

Այդ բանն առանձնապես մեծ չափերով տեղի ունեցավ հասարակության հնագույն պատմության և կուլտուրայի ուսումնասիրության բնագավառում: Գերմանական հնագետները (Օբերմայեր, Հոբստ) շտապեցին հնագիտական տվյալներով «հիմնավորել» գերմանական լեզվաբանների ռասայական ռեակցիոն տեսակետները: Նրանք չէին կարող հաշտվել այն մտքի հետ, թե երկրագնդի վրա մարդը մեկ ընդհանուր ծագում ունի, և հասարակության զարգացման, կուլտուրայի ստեղծագործության պրոցեսն էլ միասնական, համամարդկային պատմական երևույթ է և տեղի է ունենում ամբողջ մարդկության համար (առանց ցեղի խտրության) ընդհանուր օրինաչափությունների հիման վրա, այդ օրինաչափությունների՝ տեղի և ժամանակի մեջ կոնկրետ դրսևորումների միջև եղած տարբերություններով հանդերձ:

Գերմանական գիտնականները մերժեցին առաջավոր գիտության պաշտպանած տեսակետը մարդու ծագման մոնոգենեզի վերաբերյալ, որի համաձայն մարդը երկրագնդի վրա մի միասնական ծագում է ունեցել և տարբեր տեղերում առաջանալով՝ նա միևնույն միասնական տիպին է պատկանել: Նրանք առաջ քաշեցին պոլիգենեզի տեսությունը, որի համաձայն մարդը, իբրև թե, միասնական ծագում և զարգացման մի ընդհանուր ուղի չի ունեցել, տարբեր վայրերում ինքնուրույն առաջացել է առաջացել, իբրև թե մարդու ծագման օրից և եթ սկիզբ են առել տարբեր ռասաները, որոնք իրար հետ չեն խաչաձևվում և հասարակական զարգացման ու կուլտուրական ստեղծագործության տարբեր ուղիներով են ընթանում: Տարբեր նախացեղերից տարբեր էթնիկ (ցեղական, ժողովրդական) կազմավորումներ են առաջանում, որոնք իրար հետ չեն խառնվում: Միևնույն նախացեղից գոյացած և միևնույն կենտրոնից զաղթի եղանակով տարածված ազգակից ժողովուրդ-

ների կուլտուրան էլ, իրրե թե, առաջանում է միևնույն կենտրոնից, նույն արմատներն ունի և իր ուրույն էվոլուցիան է ապրում:

Այս առաջական միգրացիոն տեսութայն հեղինակ հնագետները հասարակութայն դարգացման հետեանքով առաջացած որակական փոփոխությունները կուլտուրայի մեջ՝ տվյալ երկրամասի կամ վայրի էթնիկ կազմի փոխարկվելու հետեանք հայտարարեցին:

Գերմանական հնագետ Օբերմայերի կարծիքով դեռ ստորին պալեոլիթից սկսվում են միգրացիոն ալիքները: Լեզվաբաններին հետեելով հնագետներն ու պատմաբաններն էլ՝ մարդկային հասարակութայն և նրա կուլտուրայի մեջ կատարվող որակական ամեն փոփոխություն կապեցին տարբեր ռասայի էթնիկ էլեմենտների հետ, որոնք գաղթելով տարբեր կուլտուրական կենտրոններից իրենց հետ պատրաստի և որակապես անփոփոխ վիճակում բերում են տվյալ կուլտուրան:

Հնդկրոպաբանությունը ընդհանուր պատմա-փելիսոփայական կոնցեպցիա դարձավ: Նախացիդերի գոյացումը բացատրվեց պոլիգենեզով, նախալեզվից և նախահայրենիքից բացի, սկսեցին խոսել առհասարակ նախակուլտուրաների և կուլտուրական օջախների մասին, որտեղից տարածվում է կուլտուրան գաղթի միջոցով: Այս գիտնականների կարծիքով գաղթողները հաստատվելով իրենց «նոր հայրենիքում», ամեն ինչ պատրաստի վիճակում բերելով իրենց հետ, տեղական բնիկներին ու նրանց ստեղծած կուլտուրան ոչնչացնում են: Գերմանացիներ Օբերմայերը և Կունը, Ֆրանսիական արքատ Բրեյլը նախամարդուն նրա դարգացման օրինյակ կոչվող աստիճանում (պալեոլիթի շրջան) Եվրոպա էին բերում Աֆրիկայից: Եվ, իրրե թե, օրինյակի մարդը Եվրոպայում բնաջինջ արեց նեանդերտալյան մարդուն: Եվրոպայի այս նոր բնիկներին վերագրվեց ռասայական և կուլտուրական գերազանցություն: Կունի կարծիքով սրանք էին, որ բնակություն հաստատելով Իսպանիայում և հարավային Ֆրանսիայում, ստեղծեցին արվեստը, որի «արարչությունը» միայն և միայն նրանց է պատկանում: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբներին արևմտա-եվրոպական գիտնականների մեջ ընդարձակ վեճ էր գնում նախահայրենիքի որտեղ գտնվելու, միգրացիայի ուղղության և ճանապարհների վերաբերյալ:

Հակառակ Օբերմայերի—Բրեյլի «աֆրիկական» տեսակետի,

Օսբորնը հնդերոպացիներին Արևելքից էր Եվրոպա և աշուղ գաղթեցնում, Վ. Բոտտը՝ Ալթայից, Ժակ դը-Մորգանը Առաջավոր Ասիան կամ Սիրիան էր հնագույն կուլտուրայի նախահայրենիքը համարում, Զ. Թեյլորը կազմեց Իրանից՝ Նեոլիթի գաղթի քարտեզը, բաղմագույն նկարազարդ կերամիկայի հայրենիքը համարվեց Մուզը. Մոնտեխիուսի կարծիքով բրոնզը գտնվել է «միայն մի անգամ» Արևելքում, այնտեղից էլ տարածվել բոլոր մայր ցամաքները (բացառությամբ է արվում Ամերիկայի նկատմամբ), հնուարդ Մեյերը գաղթն ընդունում էր Արևելքից, Յոզ. Ստրիգովսկին արվեստի զանազան ձևերը գաղթեցնում էր Եվրոպա Ալթայից, Իրանից, Կովկասից, Փոքր Ասիայից, որոշ ձևեր էլ նրա կարծիքով վերամշակվելով Արևմուտքում, նորից վերագտնում էին Արևելք։

Միգրացիոն-առասպական տեսության մշակումը իմպերիալիզմի էպոխայում ավելի և ավելի է քաղաքական կերպարանք ընդունում։ Արևմտա-եվրոպական իմպերիալիզմը չէր կարող հանդուրժել գաղթը Արևելքից, և 19-րդ դ. վերջերից ու 20-րդ դ. սկզբներին՝ ավելի տիրապետող է դառնում այն տեսակետը, որի համաձայն Եվրոպան է եղել մարդկության ու նրա կուլտուրայի կենտրոնը և միգրացիան զնայել է Եվրոպայից դեպի մյուս երկրամասերը (Մեյեր, Մոուլե, Ե. Ֆրադեհ, Մ. Էսպերանտո, Դեպրե, Վան Գեննեպ, Սոլովյով և Բայնաք, Շուհարդտ, Ա. Շմիդտ և ուրիշներ)։ Սրանք նույնիսկ այսպես կոչված Գլոգելյան գիրը վերագրեցին Նեոլիթյան շրջանին, որպեսզի եվրոպական գիրը աշխարհում հայտնի եղածներից հնագույնը դուրս գաս Ա. Շմիդտը անգամ չինական և ճապոնական կուլտուրաներին եվրոպական ծագում վերագրեց։

Հնդերոպաբանության և նրա միգրացիոն տեսության վերջին փուլը և տրամաբանական վախճանը կապված է գերմանական իմպերիալիզմի իդեոլոգիայի հետ։ Այդ իդեոլոգիայով ներշնչված գերմանական գիտնականները չէին կարող հանդուրժել ոչ միայն միգրացիայի Ասիայից Եվրոպա գնալու միտքը, այլև այն, որ նախահայրենիքը գերմանական «արիական, նորդական» ցեղի զբաղեցրած երկրներից հեռու լինի, և այն տեղադրեցին Լիտվայից կենտրոնական Եվրոպայի վրայով մինչև Կարպատները ընկնող երկրներում։ Եվրոպական Ժողովուրդներից հնագույնը, իսկական եվրոպական, արիական էլ համարվեցին գերմանացիները։ Այսպես առաջացավ հնդագերմանական ուղ-

ղեթյունը (Կոսսինա, Բրունդհոֆեր, Մուխ, Լիխտենբերգ, Հայն Վիլհելմ)։

Գ. Վիլհելմի կարծիքով պալետիկի վերջին շրջանում Եվրոպայում բնակվող մարդը ճշգրտագործներ տվեց, սակայն բացի նեանդերտալյան մարդուց մյուսները կենսունակ և կուլտուրական ստեղծագործության ընդունակ չլինելով՝ անհետացան։ Կոսսինան և Գ. Վիլհելմն «միակողմանիությունից» և մի շարք հաստեղծյուններից խուսափելով՝ ընդունեցին շարժումը երկու կողմ՝ արևմուտքից արևելք և հակառակը, բայց միգրացիան՝ միայն Եվրոպայից։

Մի քանի ֆրանսիացի գիտնականներ հակադրվելով հնդգերմանականությանը Շումերն ու Էլամն էին համարում այն օջախը, որտեղից տարածվել է կուլտուրան։ Գեորգ Վիլհելմն հնդգերմանականության նկատմամբ եղած այդ հակադրությունը «լուծեց» նրանով, որ Շումերը և Էլամը համարեց հնդերոպական, իսկ նրանց բնակիչներին՝ Եվրոպայից գաղթած Գերմանական հնագիտության ներկայացուցիչ՝ Գեորգ Վիլհելմի կարծիքով գոյություն է ունեցել հնդգերմանական ցեղերի մի նախահայրենիք, մի կենտրոն (միջին և արևմտյան Եվրոպան), մի կուլտուրա և սրա միակ ստեղծագործողներն էլ եղել են հնդգերմանացիները։

Վիլհելմն գտնում է, թե կուլտուրան տարբեր տեղերում զուգահեռաբար չի ստեղծվում, այլ առաջանում է մի կենտրոնում, որտեղից և տարածվում է։ Բայց ի՞նչ եղանակով։ Գուցե առևտրի շնորհիվ, կամ դանդաղորեն հարևաններին փոխանցվելով։ Բայց Վիլհելմն բազմաթիվ փաստեր հարմարեցնելով իր տեսակետին՝ աննշան դեր է վերագրում այդ երկու ուղղուն, գտնելով, թե որակական փոփոխությունները զրանցով չեն առաջանում և ընդունում է, թե կուլտուրան Եվրոպական օջախից տարածվել է միգրացիայի միջոցով։

Վիլհելմն ձևական նամանությունների հիման վրա կազմել է հնագիտական նյութերի ընդարձակ տիպաբանական սխեմաներ, որոնցով աշխատել է ցույց տալ, թե միգրացիան ընդհանուր, ի՞նչ ճանապարհներով և դեպի ո՞ւր է տարածվել։

Մայրահղությունների հասցնելով առանց այն էլ արատավոր ձևական-տիպաբանական համեմատական մեթոդը և կարելով իրեն ու երևույթները ժամանակից, պատմական միջավայրից և հասարակությունից դարձացման աստիճանից՝ Վիլհելմն

իրար հետ է համեմատել և դասդասել քարե, կավե իրերը, քանդակները, միֆերը և պաշտամունքային րմբոնուեմները: Դասակարգումը կատարված է զուտ ձևական նմանությունների հիման վրա, ըստ որում իրար հետ են համեմատված և նույն կարգին են դասված, ասենք, Սուգի բաղմագույն կավե ամանները, Նախիջևանի մոտ Արաքսի ափին գտնվող Կարմիր-վանքի բաղմագույն կավե ամանների բեկորները, Անաուի (Թուրքմենստան) և Ջինաստանի դույներով ու ձևերով նույնանման կերամիկան: Համաձայն զրան էլ դրված է գաղթի ուղին՝ Սուգից—Ջինաստան:

Վրկեն համեմատության մեջ է դնում ոչ միայն բաղմութիվ երկրների իրերն ու առարկաները, այլև առանձին կավե բեկորների վրա հանդիպող՝ ձևով իրար նմանվող դարդանկարները, կտրելով նրանց իրենց միջավայրից և հաշիվ չառնելով ոչ ժամանակը, ոչ էլ տեղիտրիան: Նույն հնդկադարձանության սկզբունքների՝ մանավանդ միգրացիոն տեսության հիման վրա է կառուցված գերմանական արխեոլոգիական հանրագիտաբանը («Reallexicon der Vorgeschichte»):

Վրկենայի էթնոլոգիական շկուան (Վ. Շմիդտ, Մենդին, Շտայտ, Կոպպերս) ոչ միայն կուլտուրական, այլև տնտեսական կյանքում կատարվող բոլոր փոփոխությունները բացատրում է բնակչության էթնիկ կազմի կամ ռասաների փոխարկություններով: Այնպես է ստացվում, թե երկրի վրա գոյություն են ունեցել հողագործական ռասա, անասնապահական ռասա, նույնիսկ ժապավենաձև գարդանկար ունեցող կավե ամաններ արտադրող ռասա: Այդ ռասաները գտնվում են հարատև պայքարի մեջ և, երբ մեկը հաղթում է մյուսին ու գրավում է նրա տեղիտրիան, ապա պարտված ռասայի կուլտուրան փոխարինվում է հաղթողի կուլտուրայով:

Մենդինը հնարավոր է համարում ցեղերի, ժողովուրդների և նրանց կուլտուրաների խաչաձևումները, սակայն այդ արտոնությունը վերապահում է միայն առանձին ժողովուրդների և կուլտուրաների, խաչաձևումն էլ համարում է սոսկ որպես դիպված, որով իրար են խառնվում արդեն պատրաստի և ձևավորված կուլտուրաները: Այդպիսով խաչաձևումը չի դիտվում որպես տեղական պրոցես, որի ընթացքում տարբեր էթնիկ էյեմանները և նրանց կուլտուրաները սինթեզվում են և դարձաց-

ման ու փոխակերպությունները ենթարկվելով՝ առաջացնում են նոր կուլտուրա:

Վ. Շմիդտը, Մենգինը և մյուսները ցեղային կամ էթնիկական խմբերի փոխարկվելու հետ կապեցին նույնիսկ հասարակական և կուլտուրական զարգացման տարբեր աստիճանները: Նրանք ժխտելով հասարակական առաջընթաց զարգացման պրոցեսը միասնությունը, խորացրին «կուլտուրական շրջաններ» տեսությունը և մարդկության վաղադույն կուլտուրան բաժանեցին մեկը մյուսի հետ կապ չունեցող և առանձին պիրամիդների պես կանգնած կուլտուրական չորս շրջանների, այն է՝ նախնական կուլտուրաների շրջան, առաջադիմած կուլտուրաների շրջան, ավելի առաջադիմած կուլտուրաների շրջան և նախապատմական շրջան, դիտելով զբանք որպես իրար հաջորդած էթնիկական խմբերին համապատասխանող «կուլտուրական շրջաններ»:

Վեճեր սկսվեցին այս կամ այն «կուլտուրական շրջանի», ավելի ճիշտ՝ այս կամ էթնիկ խմբի առաջնություն մասին: Այս «կուլտուրական շրջանների» առաջացումը բացատրվեց նույն միզբացիոն տեսությամբ, նոր էթնիկ խմբերը գաղթելով և զալով բնակություն հաստատեցին տվյալ շրջանում, որտեղից էլ հետագայում գաղթելով՝ տարածեցին այս շրջանի կուլտուրան:

Նույնիսկ ժխտվեց այդ շրջանների միջև կապը և կուլտուրական հաջորդականությունը, որովհետև միզբացիոն տեսություն հեղինակների կարծիքով նոր խմբերը զբաղվում էին կամ դատարկ տարածություններ և կամ կուլտուրական ստեղծագործության անընդունակ ցեղերի տերիտորիաները: Եվ, իբրև թե, նոր կենսունակ և կուլտուրական ստեղծագործության ընդունակ ցեղերի երևան գալով, նախկին բնակիչներն անհայտանում էին: Այս եկվորներն էլ, իբրև թե, էթնիկ տեսակետից վերջնականապես ձևավորված են լինում և որակական փոփոխության չեն ենթարկվում: Բնակիչներից ոմանք էլ գտնում էին, թե նորեկները, նվաճելով տվյալ երկրները, բնիկներին քշում էին հեռացնում, որպեսզի չխառնվեն նրանց հետ և «մաքուր» պահպանեն իրենց ռասան:

Եզան և այնպիսի «գլխավորներ», որոնց կարծիքով նորեկները հանրին պարզապես ոչնչացնում էին: Ամերիկացի Օսբորնը, օրինակ, պնդում է, թե ապացույցներ չկան թե նեանդեր-

առաջան կանայք չոչնչացվեցին և երկրում ֆալու թուլատվություն ստացան¹։

Իսկ գերմանական գիտնական Հաուզերը այնքան է հեռու գնում մարդատյաց իդիոլոգիայի մեջ, որ պնդում է, թե գաղթողները, որպեսզի ազատվեն տեղացիների հետ խառնվելու անխուսափելի վտանգից, պարզապես կոտորում, ոչնչացնում և երկրի երեսից սրբում էին այն ցեղերին, որոնք հանդիպում էին նրանց գաղթի ճանապարհին։ Եթե նկատի ունենանք, որ ավելի զարգացած կրոմանոնյան մարդը երկրի երեսին ամենուրեք է փոխարինել նեանդերտալյան մարդուն, ապա դուրս է գալիս, թե նեանդերտալներն ոչնչացումը տեղի է ունեցել ամենուրեք։

Միգրացիոն տեսությանը բուրժուական գիտության մեջ էթնիկ ու կուլտուրական հարցերը լուծելու համապարփակ բաժանալու դեր վերագրվեց։

Թերևս միգրացիոն տեսության կարապի երգն էր այն, որ գիտնականները (Լեվի Սիլվեն, Ռիվյե և ուրիշները) ամերիկյան ժարդու և նույնիսկ Հարավային Ամերիկայի ամենահարավային ծայրամասի բնիկների և կուլտուրայի ծագումն էլ սկսեցին բացատրել Ավստրալիայից, Մալայո-Պոլինեզիայից այստեղ եկած միգրացիոն ալիքներով։

Եվ երբ նույնիսկ արևմտյան մի քանի գիտնականներ այնուամենայնիվ կասկածանքի ենթարկեցին այդպիսի գաղթի հնարավորությունը (մանավանդ ենթադրվում էր, թե գաղթը հաջորդել է Ավստրալիայի-Պոլինեզիայի և Ամերիկայի՝ օվկիանով իրարից անջատվելուն), ապա Ռիվյեն 1924 թ. ընդ փաստերով՝ հանդես եկավ ի պաշտպանություն այդ գաղթի տեսության։ Նա վիճելի էր համարում միայն մեկ հարց՝ ավստրալիացիները կամ մալայո-պոլինեզացիները գաղթել են անցնելով Բերինգյան Նեղոսցով, Ալյասկայի՝ վրայով, թե՞ օվկիանոսային ճանապարհով։ Դրանով միգրացիոն տեսությունը մի տեսակ ծաղրանքի վերածվեց։

Բայց միգրացիոն տեսությունները կազմվում էին «ամենայն լրջութամբ»։ Բանն այնտեղ հասավ, որ միգրացիոն տեսության խոշորագույն ներկայացուցիչ Սոլոմոն Ռայնսը, ինչպես և Վան Թեննենը, զգալով, որ գիտությունը խեղդվում է միգրացիոն տեսության հորձանքների մեջ, հանդես եկան ամեն ինչ

¹ Осборн, Человек древнего каменного века, т. 1, стр. 205.

միգրացիայով բացատրելու դեմ: «Բազմական է միգրացիոն մի-
րաժը», — ստիպված էր բացականչել Ս. Ռայնսը:

Այնուամենայնիվ բուրժուական գիտության մեջ միգրա-
ցիոն տեսությունը տիրապետող մնաց և մինչև այժմ էլ արև-
մուտքի անպամ համեմատաբար առաջադեմ գիտնականները չեն
կարողանում ազատվել նրա ճնշող ազդեցությունից: Օրինակ,
անգլիական գիտնական անտեսական մատերիալիզմի ներկայա-
ցուցիչ Գորդոն Չայլդը մի քանի տարի առաջ լույս ընծայած
իր աշխատության մեջ, իբրև թե, մերժելով միգրացիոն տեսու-
թյունը, միաժամանակ չի հրաժարվում այդ տեսության մի-
քանի հիմնական սկզբունքներից: Նա մերժում է մարդու հնա-
գույն կուլտուրայի միասնությունը և նրա զարգացման միասնա-
կան ուղին: Վիկինայի էթնոլոգիական շկոլայի ու արքայա Ռեյ-
լի (Ֆրանսիական շկոլա) հետևությունները նա նեոլիթի սկզբից և
եթ ընդունում է երկու տարբեր ցեղերի իրար հետ չխաչաձև-
վող, իրար հակադիր կուլտուրաների ու «կուլտուրական շրջան-
ների» գոյությունը և պայքարն այդ ցեղերի ու կուլտուրաների
միջև: Իսկ homo sapiens-ը (գիտակից մարդը), իբրև թե, ոչ մի
առնչություն չունի այսպես կոչված կլեկտոնյան կուլտուրան
ոտիդած մարդու՝ նեանդերտալիսի հետ, որը մեռնում, անհե-
տանում է և զրան էլ օգնում է վերին պալեոլիթի ռասայի առա-
ջացումը:

Մինչևևերջին Ռուսաստանի գիտնականներից շատերն
էին հետևում նույն միգրացիոն տեսությանը: Ն. Յա. Մառն էլ
իր գիտական գործունեության գեռ առաջին տարիներից որոշ
հարցերում հակադրվելով հնդեւրոպաբանությանը, այնուամենայ-
նիվ մինչև ևերջին տարիները հիմնովին կանգնած
էր մնում հնդեւրոպական լեզվագիտության և պատմագիտու-
թյան դիրքերի վրա և ամբողջովին որդեգրել էր նաև միգրա-
ցիոն տեսությունը: Ն. Մառն այսպես կոչված «հաբեթական»
լեզուների և ժողովուրդների տարածումն էլ կովկասից դեպի
Միջերկրական ծովի ավազանը կամ հակառակ ուղղությամբ
բացատրում էր միգրացիայով:

Ռևոլուցիայի առաջին տարիներին էլ հնագիտության բնա-
ղավառում դեռ ընդունվում էր միգրացիոն տեսությունը: Բ. Ն.
Վիշնևսկին իր «Пронсхождение древнего человека», 1926
թ. Լենինգրադում լույս տեսած, զրքում մերժելով մարդու ծագ-
ման վերաբերյալ պոլիգենեզի գերմանական ռասայական տե-

առևթյունը, սակայն գտնուեմ էր, թե մարդը ծագել է երկրագնդի վրա միայն մի կետում, որն իբրև թե գտնվում էր Հիմալայան լեռներից դեպի հյուսիս: Այստեղ առաջանալով՝ մարդը գաղթականական ակունքներով Ասիայի մեծ գետերի հովիտներով տաքածվեց երկրի երեսին և Ալյասկայի վրայով էլ անցավ Ամերիկա: Աշխատութեանը կցված է քարտեզ, որտեղ ցույց հն տրված մարդկութեան «նախահայրենիքը» և միգրացիայի ուղիները:

Միգրացիոն տեսությունը 1920-ական թվականներին ընդունում էին հայտնի հնագետ Վ. Ա. Գորոդցովը և ուրիշները:

Բուրժուական դիտնականները միգրացիոն տեսությունը չարժրին համընդհանուր օրենք:

Անտրոպոլոգները սկսեցին որոնել մեկ կամ մի քանի կետեր, որտեղ իբրև թե ծագել է մարդկային ցեղը (կամ տարբեր ցեղերը) և գաղթելով՝ տարածվել ամենուրեք, լեզվաբանները փնտռում էին նախահայրենիք և նախակուռ, հնագետները՝ կուլտուրայի մի կամ մի քանի կենտրոն, որտեղից միգրացիոն ակունքների հետ տարածվել է մարդկային կուլտուրան: Մարդկային հասարակութեան զարգացման և կուլտուրական ստեղծագործութեան պրոցեսում առաջացած որակական փոփոխությունները կապվեցին գաղթի հետ: Ամեն նոր կուլտուրա նոր էթնիկ միջավայրի արդյունք համարվեց:

Միգրացիոն տեսությունը պատմա-փիլիսոփայական տեսակետից իդեալիստական մետաֆիզիկ մեթոդոլոգիայի հիման վրա է կառուցված: Պատրաստի և արդեն ձևավորված և միայն դանդաղ էվոլուցիայի ենթարկվող էթնիկ խումբը, լեզուն և կուլտուրան միայն տեղափոխվում, տարածվում են:

Ժողովուրդների, նրանց լեզվի և կուլտուրայի զարգացման պատմական պրոցեսը կարվեց հասարակութեան սոցիալական զարգացման ընդհանուր պրոցեսից և պատմական միջավայրից: Անտեսվեց հենց ինքը հասարակութեան սոցիալական զարգացման պրոցեսը: Անտեսվեցին պատմական առաջընթաց զարգացման աստիճանները և նրանց հետևանքը հանդիսացող կուլտուրաների հաջորդականութունը փոխարինվեց իրարից տնջատ և անկապակից համարվող «կուլտուրական շրջանների» (տեքստուրիալ իմաստով), կամ իրար փոխարինող էպիստաների տեսությամբ: Ըստ որում նոր էպիստան ոչ թե զարգանալով հնից է առաջանում, այլ, իբրև թե, նոր երևան եկած ռասայի ստեղծագործությունն է հանդիսանում և բռնում է անհետացած հնի

տեղը: Մասնակի որակական փոփոխությունները համարվեցին ազդեցությունների և փոխառությունների հետևանք: Միջանկյալ և անցողիկ կուլտուրաները վերագրվեցին ինչ որ անհայտ էթնիկ խմբերի:

Միգրացիոն տեսությունը իր հիմքով ռասայական տեսություն է: Գաղթող էթնիկ խմբերը այս կամ այն ռասայից են սերված համարվում, ըստ որում ավելի կենսունակ և կուլտուրական ստեղծագործության ընդունակ հայտաբարվում է հնդե-րասական, իսկ գերմանական գիտնականների կարծիքով՝ արիո-գերմանական ցեղը: Ցեղերի հոգեկան և ֆիզիկական տիպը համարվեց անփոփոխելի:

Ներքին սոցիալական զարգացումը և սոցիալական հակադրություններն ու կոնֆլիկտները փոխարինվեցին արտաքին մոսինտներով՝ ռասայական հակադրություններով ու ռասաների լայն քարտի:

Իմպերիալիզմի էպոխայում միգրացիոն տեսությունը գործիք դարձավ իրենց բարձր ռասա համարող, տերիտորիալ զավթումների և ուրիշների վրա իրենց իշխանությունը հաստատելու ձգտող իմպերիալիստական գիշատիչների ձեռքում:

Մոտանելի է միգրացիոն տեսության ոչ միայն մեթոդոլոգիան, այլև մեթոդը: Քննարկվող հարցը կամ նյութը կտրվում է ոչ միայն պատմական միջավայրից, այլև դիտվում է միակողմանիորեն, հարմարեցվում է մտացածին և կանխակալ կարծիքներին ու տեսություններին: Նախահայրենիքների և «կուլտուրական շրջանների» տեսության համապատասխան՝ քննարկվող նյութը դասակարգման է ենթարկվում զուտ ձևական-համեմատական մեթոդով, կազմվում են տիպաբանական սխեմաներ, որոնց մեջ դասադասվում են լեզվի, նյութական և հոգևոր կուլտուրայի մատերիալներն ու տվյալները ըստ զուտ արտաքին ձևական նմանությունների, ըստ որում անտեսվում է պատմական միջավայրը, ժամանակը և տվյալ երկրի, որտեղ նյութերը հայտնաբերված են, հասարակական զարգացման աստիճանը:

Հնագիտությունը դարձավ համեմատական առարկայագիտություն, լեզվաբանությունը՝ առավելապես հնդերոպական համարվող լեզուների համեմատական ուսումնասիրություն:

Հետոմնաց և ռեակցիոն միգրացիոն տեսությունը միան-

դամայն անհարիր է մարքսիզմ-լենինիզմի պատմա-մատերիալիստական ուսմունքին:

Մարքսիզմի կլասիկները բացահայտեցին մարդկային հասարակութայն առաջացման և զարգացման պրոցեսի միասնականությունը, նրա առաջընթացի ուղիներն ու օրինաչափությունները նախնադարյան հորդայից սկսած մինչև սոցիալիստական հասարակութայնը:

Ընտանիքի ծագումը, ցեղային միությունները, ժողովուրդների, դասակարգային հասարակութայն և պետութայն, ու ազդերի կազմավորման պատմական պրոցեսները հանճարեղորեն բացահայտվեցին և լուսաբանվեցին մարքսիզմի կլասիկների մի շարք աշխատություններում:

Ֆրիդրիխ Էնգելսը «Բնության դիալեկտիկան» և «Ընտանիքի, մասնավոր սեփականութայն և պետութայն ծագումը» աշխատությունների մեջ լուսաբանել է մարդու ծագման և նախնական հասարակութայն ու նրա կուլտուրայի զարգացման պատմությունը, դասակարգային հասարակութայն և պետութայն առաջացումն ու զարգացումը: Այդ աշխատությունների մեջ ժողովրդի առաջացումը դիտվում է որպես դասակարգային հասարակութայն և պետութայն կազմավորման միասնական պրոցեսի բաղկացուցիչ մասը և հետևանքը:

Ընկեր Ստալինը բացահայտել է ժողովուրդների և ազգությունների դոյացման պատմական պրոցեսը: Ժողովուրդներն ափելի վաղ են առաջանում, քան ազգերը, ազգի առաջացման պրոցեսն ափելի երկարատև է և իր ավարտին է հասնում բուրժուական հասարակութայն մեջ:

Դեռ 1912 թվին «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատութայն մեջ ընկեր Ստալինը գրել է. «... Ազգը ոչ ուսացական և ոչ էլ ցեղային, այլ մարդկանց պատմականորեն կազմավորված ընդհանրություն է»¹:

Այնուհետև քննարկելով ազգը բնորոշող հատկանիշները, ընկեր Ստալինը եզրակացնում է. «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կալում բնդեանրություն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի բնդեանրություն մեջ դրսեվորվող հոգեկան կերտվածքի բնդեանրության բազայի վրա»:²

¹ Ի. Ստալին, Երկեր, հատ. 2, Երևան, 1947, էջ 342:

² Նույն տեղ, էջ 346:

Բուրժուական գիտությունը մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան մի շարք կոնկրետ գիտությունների (լեզվաբանության, հնագիտության, ազգագրության, մարդաբանության և այլն) բնագավառներում դեռ իշխող էր։ Նա իր սոցիալական էությունը հակադրվում էր մարքսիզմին-լենինիզմին և չէր կարող չանտեսել հասարակության զարգացման վերաբերյալ մարքսիստական պատմա-մատերիալիստական ուսմունքը, որը մերժում է ամեն մի հետամնաց ու ռեակցիոն տեսություն, զրանց թվում և միգրացիոն տեսությունը։

Մինչև ռեվոլյուցիոն շրջանի մարքսիստ պատմաբաններն էլ իրենց ամբողջ գործունեությունը նվիրել էին աշխարհի ռեվոլյուցիոն վերափոխության մեծ գործին, իսկ պատմական կոնկրետ առարկաների՝ հնագիտության, լեզվաբանության, ազգագրության և այլ գիտությունների ուսումնասիրությունը մնում էր բախտավոր ապագային և կարող էր տեղի ունենալ առաջավոր գիտականների մարքսիստական ուսմունքով վերազինվելու և նոր մարքս-լենինյան գիտական կազմերի առաջացման շնորհիվ։

Ահա այս բախտավոր ապագան իրականություն դարձավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի հաղթանակով, որով գիտականների առջև վճռականորեն հարց դրվեց՝ կողմնորոշվել դեպի ռեվոլյուցիան և ընդունել մարքսիստական տեսական և պատմա-փիլիսոփայական աշխարհայացքը հանդիսացող գիտելիության և պատմական մատերիալիզմը։

Միգրացիոն տեսության մերժումն էլ կարող էր տեղի ունենալ և տեղի ունեցավ պատմության մատերիալիստական ըմբռնման հիման վրա։

Գիտականներից շատերը դեռ նախառևոլյուցիոն շրջանում, շնորհիվ իրենց առաջավոր հայացքների և ուսումնասիրվող յուրերի հարստության, զգացին բուրժուական գիտության, մանավանդ հնդեքսպանության դասակարգային սահմանափակվածությունն ու ռեակցիոն լինելը և աստիճանաբար ազատագրվելով նրա ազդեցությունից՝ անցան դեպի մարքսիզմը։ Նրանք սովետական շրջանում, վերազինվելով մարքսիստական պատմա-մատերիալիստական աշխարհաճանաչողությամբ, միանգամայն սկզբունքային գիրքերից հակադրվեցին բուրժուական պատմագիտությանը, մերժեցին նրա տեսական հիմքերը, մեթոդոլոգիան և մեթոդը։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյու-

ցիայից հետո կոնկրետ գիտությունների շատ բնագավառներ
ռեվոլուցիոն վերափոխման կարիք ունենին:

Լեզվաբանության, հնագիտության բնագավառներում այդ-
պիսի ռեվոլուցիոնների գերով հանդես եկավ Ն. Յա. Մառը: Նա
գեո նախառեվոլուցիոն շրջանում առանձին հարցերում հակադը-
վեց հնգերոպական գիտնականներին, իսկ 1920-ական թ. թ. ու-
ժեղ էվոլուցիա կատարելով դեպի մարքսիզմ՝ 1926—1928 թ. թ.
լեզվի նոր ուսմունքի մշակմամբ վերջնականապես մերժեց բուր-
ժուական լեզվագիտությունը և անցավ մարքսիստ-գիտնական-
ների բանակը:

Մառը հանդիսացավ միգրացիոն տեսության առաջին քննա-
դատը և մերժողը՝ լեզվաբանության և հնագիտության բնա-
գավառում:

Իսկ 1922 թ. լույս տեսած «Талишы» աշխատության մեջ
Մառը, հակառակ հնգերոպաբանների, խոսեց կուլտուրաների ոչ
թե բերովի լինելու, այլ տեղական ծագում ունենալու մասին,
իսկ 1923 թ. «Яфетический Кавказ и третий этнический
элемент в создании средиземноморской культуры» աշխա-
տության գերմաներեն թարգմանության առաջաբանում նա
վճռականապես հրաժարվեց հարեթական ցեղերի միգրացիայի
տեսակետից: Մառը գրում էր. «Հարեթական ցեղերի կովկասից
դեպի արևմուտք, կամ հակառակը՝ Իսպանիայից կովկաս և կամ
այդ երկու շրջանները Պամիրից գաղթելու վերաբերյալ միտքն
այժմ վերադրուկային է հանդիսանում»: Հետագա տարիներում
Մառն ամենայն վճռականությամբ մերժեց միգրացիոն տեսու-
թյունը: Նրա աշակերտներն էլ (օրինակ ակադ. Ի. Ի. Մեդջանի-
նովը) հանդես եկան միգրացիոն տեսության սկզբունքային
քննադատությամբ:

Սովետական գիտությունը մերժեց միգրացիոն տեսությու-
նը որպես իդեալիստական, մետաֆիզիկ, ռասայական պատմա-
գիտական կոնցեպցիա:

Սակայն սովետական գիտությունը ամենեկն չի ժխտում
միգրացիաների պատմական փաստերը և նրանց նշանակությու-
նը: Միգրացիան՝ պատմական իրողության և հասարակության
ու նրա կուլտուրայի զարգացման և փոխակերպությունների մի
մոմենտ է հանդիսանում, որի իրական նշանակությունն էլ
բացահայտվում է սովետական գիտության կողմից: Պատմականո-
րեն իրոք տեղի ունեցած գաղթերի ժամանակ խառնվում են

տարբեր ցեղերը, էթնիկ խմբերը կամ տարրերը, որակապես իրարից տարբեր կուլտուրաները: Սրանք գաղթի ժամանակ էլ ենթակա են զարգացման փոխակերպությունների, իսկ խաչաձևամբ սինթեզվելով՝ կարող են առաջացնել նոր ժողովուրդ, սոցիալական հարաբերությունների նոր էպոխա, նոր լեզու և կուլտուրա, կամ կարող են տնտեսական, սոցիալական, էթնիկ և կուլտուրական այլևայլ փոփոխությունների պատճառ հանդիսանալ: Ուրեմն միգրացիան հասարակութայն պատմական զարգացման և փոխակերպությունների մեջ նշանակություն ունի որպես պատմական իրողություն մի մոմենտ, որը առանձին կոնկրետ դեպքերում առաջացնում է խաչաձևումներ, որոնք կարող են հասարակական երևույթների փոխակերպությունների կամ նոր սինթեզի պատճառ հանդիսանալ:

Կարլ Մարքսը խոսելով նվաճումների ժամանակ արտադրության եղանակի մեջ տեղի ունեցող փոփոխությունների և խաչաձևումների մասին, նշել է, թե՝

«Բոլոր նվաճումների ժամանակ երեք տեսակ ելք է հնարավոր: Նվաճող ժողովուրդը նվաճվածների վզին փաթաթում է արտադրության այն եղանակը, որ հատուկ է իրեն (օրինակ՝ անգլիացիներն Իսլանդիայում այս դարում, մասամբ Հնդկաստանում), կսւ՝ նվաճող ժողովուրդը թողնում է, որ հինը մնա, և բավականանում է տուրքով (օրինակ՝ թուրքերն ու հոռմայեցիները), կամ՝ տեղի է ունենում փոխադրեցություն, որի միջոցով առաջանում է մի նորը, իբրև սինթեզ (մասամբ գերմանական նվաճումների ժամանակ)»:¹

Սովետական գիտությունը մերժում է հնդերոպական գիտության ոչ միայն մեթոդոլոգիան, այլև մեթոդը: Ոոսքը վերաբերում է համեմատական մեթոդին, որը զարձավ բուրժուական լեզվարանների, հնագետների ու կուլտուրայի պատմաբանների գիտական ուսումնասիրության գլխավոր, եթե ոչ միակ միջոցը, և որը անտեսելով հոգիոր ու նյութական կուլտուրաների, լեզվի զարգացման ու որակական փոխակերպությունների պրոցեսը, սոսկ ձևական տիպաբանական համեմատություններով գասգասում էր լեզուներն ու կուլտուրաներն ըստ ընտանիքների և «կուլտուրական շրջանների»: Չուտ արտաքին ձևական նմանությունների հիման վրա կատարվող համեմատությունը և գասա-

¹ Կարլ Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 251:

կարգուածը զարգացման պատմական պրոցեսի անտեսուեմն էր նշանակում, այդ պրոցեսի խորը և բազմակողմանի անալիզի մերժումը:

Սակայն զարգացման պրոցեսի և նրա բազմակողմանի ու խորադնին անալիզի ընդունմամբ համեմատական մեթոդը որպէս գիտական ուսումնասիրութեան մի միջոց դնելը չի նշանակում:

Ինչպէս միզրացիոն տեսութեան մերժմամբ չեն ժխտուում միզրացիայի պատմական փաստերը և նրանց նշանակութիւնը, նույնպէս և համեմատական ֆորմալ տիպոլոգիական մեթոդի մերժումով չի ժխտուում համեմատական մեթոդի, որպէս ուսումնասիրութեան բազմաթիւ եղանակներից մեկի, բայց ոչ գլխավոր եղանակի, դերն ու նշանակութիւնը: Փոխվում է սկզբունքը: Հարցը դրվում է պատմա-մատերիալիստական հիմքերի վրա:

II

Բուրժուական գիտութիւնը ժողովուրդների առաջացումն էլ բացատրում է նախացեղի ճյուղավորմամբ և միզրացիայով: Միայն նախահայրենիքում ապրող ժողովրդին է վերապահվում տեղաբնակ լինելու իրավունքը: Վիլհէն, օրինակ, գերմանացիներին էր համարում սկզբից, ևեթ իրենց երկրում բնակվող ժողովուրդ: Որոշ գիտնականներ ֆրանսիացիներին էլ չէին մերժում այդպիսի բացատրութիւն կազմել: Շատ ու շատ ժողովուրդներ ուրիշ տեղից (նախահայրենիքից կամ նրա շրջակայքից) իրենց «նոր» հայրենիքը գաղթած համարվեցին:

Նվրոպական գիտնականները նույն միզրացիոն տեսութեամբ բացատրեցին նաեւ հայ ժողովրդի կազմավորումը: Դեռ նոր էր առաջանում հնդեւրոպական լեզվաբանութիւնը, երբ 1837 թ. Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Պետերմանը և, համարյա, միաժամանակ Վիլհէլմանը ձեական-համեմատական մեթոդով կատարած ուսումնասիրութեան հիման վրա հայերենը համարեցին հնդեւրոպական լեզու: Անմիջապէս գիտնականները սկսեցին որոնել հայերենի և հայերի ավելի մերձավոր ազգակցական կապերը: Գոչն, Մյուլլերը, մանավանդ, դր Լագարդը այն կարծիքը հայտնեցին, թե հայերենը հնդեւրոպական լեզվաընտանիքին վերագրվող իրանական լեզուների ճյուղին է պատկանում: Հայերենը և հայ կուլտուրան իրանականից ածանցված համարվեց:

Այս պանիրանական իզեոլոգիան իր հետևորդներն ունեցավ և հայ գիտնականների թվում (Գ. Խալաթյան) և իրեն զգացնել է տալիս մինչև օրս էլ:

Անցյալ դարի վերջին քառորդում գերմանական գիտնական Հյուբերմանը այն միտքը հայտնեց, թե հայերենը իրանական լեզուների ճյուղին չի պատկանում, այլ հնդկրոպական լեզուների մի առանձին ճյուղ է կազմում, ազգակից փոյուզերենին և ավելի մոտ է լիտվական, սլավոնական լեզուներին, քան պարսկերենին: Իրանական բառամթերքը և քերականական ձևերը հայերենում ուշ ժամանակի փոխառություններ են: Այս տեսակետը ավելի մշակեցին և խորացրին ֆրանսիական լեզվաբան Մեյեն, նրա աշակերտ Աճառյանը և ուրիշները: Թեև պետք է նկատել, որ Մեյեն լուրջ վերապահություններ էր անում հայերենի հնդկրոպական լեզու լինելու, ինչպես և փոյուզերենի հետ ազգակցություն ունենալու վերաբերյալ:

Երբ հայերենը համարվեց հնդկրոպական լեզու, հայերին էլ բնականաբար սկսեցին դադլթեցնել հնդկրոպական նախացղի նախածայրենիքից, կամ նրա շրջակայքից: Արմենների գաղթը կապվեց թրակիական ցեղերի Փոքր Ասիա գաղթելու հետ (էդ. Մայեր, Կրեչմեր, Դոլենս և Խաչ, Լեո, Կ. Կոստանյան և ուրիշները):

Հայերին Թրակիայից Փոյուզիա, այնտեղից էլ Հայաստան բերելու տեսությունը բացի հնդկրոպաբանությունյան ընդհանուր կոնցեպցիայից բխելը, հենվում է նաև հույն պատմիչների որոշ տեղեկությունների վրա: Սակայն գերմանական հայագետ Մարկվարտը լավ էր զգում, թե որքան հեղհեղուկ են այդ փաստարկները և 1919 թ. «Հայ ազգի ծագումը և վերականգնումը»¹ աշխատությամբ փորձեց հայերի միգրացիային «գիտական» կերպարանք տալ նաև լեզվաբանական և այլ հնչյունական նմանությունների հիման վրա: Նույն հարցին Մարկվարտը վերադարձավ նաև 1930 թ. «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ափերը»² աշխատության մեջ:

Կրեչմերը գտնում է, թե արմենները դադլթելով Հայաստան, իրենց մեջ են լուծել ոչ միայն խալդերին, այլև Հայկական Լեո-

¹ Markward J., Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919.

² Նույնի «Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen», Wien, 1930.

նաշխարհի նախաւերալուծական ցեղերին, որոնց թվում և հայաստան կոչվող ցեղին, որից և ժառանգել են իրենց հայ անունը:

Մարկվարտի և Կրեյմերի կարծիքները հայ ժողովրդի ծագման վերաբերյալ հնդեվրոպական գիտության վերջին խոսքն էին: Հայերը եկվոր հնդեվրոպական ժողովուրդ են: Այստեղ ասեն ինչ բացատրվում է դուրին և պարզեցրած ձևով, միայն թե հայ ժողովրդի առաջացման հարցից դուրս են նետվում հասարակության զարգացման պրոցեսը, նրա օրինաչափությունները, այլ խոսքով՝ ինքը կյանքը և պատմությունը:

Ռուսական հայագիտությունը հայերենի և հայերի առաջացման և զարգացման հարցում ինքնուրույն ուղիով է ընթացել:

Ռուսաստանում հայագիտությունը թեև ուշ սկսեց զարգանալ, բայց շուտով առաջացավ մի նշանավոր առաջադեմ ուղղություն, որի գլուխ կանգնած էր ակադ. Մառը: Այս ուղղությունն էլ սովետական շրջանում հսկայական գործ կատարեց հայագիտության, կովկասագիտության և, շնորհիվ իր գիտական լայն ընդգրկման, նաև ընդհանուր լեզվագիտության, հնագիտության և ազգագրության հին բուրժուական դիրքերից՝ մարքսիստական դիրքերի վրա փոխադրելու հարցում:

Դեռ 1880 թ. թ. սկիզբներին Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Բերովսե Պատկանյանը այն ենթադրությունն արեց, թե հայ ժողովուրդը միատարր չէ և նրան տրվող հայ և արմեն անունները այդ ժողովրդի մեջ ձուլված երկու տարրերն են նշանավորում: Իսկ Պատկանյանի աշակերտ ապագա սովետական մեծ գիտնական Մառը դեռ 1903 թ. հակադրվելով հայերենի հնդեվրոպական առանձին լեզվաճյուղ կազմակու վերաբերյալ զոգմատիկ տեսակետին, գրում էր. «Մի բան պարզ երևում է, [հայերենը] խառը լեզվի բնորոշ օրինակ է»: Ապա Մառը նախադգուշացնելով, թե «խոսքը, իհարկե, ակնհայտաբան փոխառյալ բառերի հարուստ խառնուրդին չի վերաբերում», պնդում էր. «Են նկատի ունեմ իրական հայ լեզվի կորիզը, որն առաջացել է պատմական Հայաստանի հողի վրա (ընդգծումը մերն է, Բ. Ա.): Ինքը կորիզն է երկսեռ»: Իրանով խախտվում էր հնդեվրոպաբանների զոգմատիկ ժողովուրդ, և հայ լեզվի ու հայ ժողովրդի առաջացումը դրվում էր պատմական Հայաստանի հողի վրա և նրա հասարակական զարգացման էթնիկ ու կուլտուրական միջա-

վայրի մեջ, որով հեռանկարներ էին բացվում հետագա ուսումնասիրությունների համար:

Մառը հետազայում փաստական մեծ նյութի հիմուն վրա հերքեց այն տեսությունը, թե «հայերենը հնդեվրոպական է, բայց ազդված որոշ լեզուներից» և պնդեց, թե հայերենը «հնդեվրոպական է և հաբեթական»: Հայ ժողովուրդն էլ կազմված համարվեց երկու տարրերից՝ եկվոր արմեններից և տեղական հաբեթական ցեղերից: Սակայն պետք է նկատել, որ Մառն այս ամենը ասում էր այն ժամանակ, երբ դեռ կանգնած էր մնում հնդեվրոպական լեզվագիտության դիրքերի վրա, միայն թե առաջարկում էր ճանաչել ևս մի լեզվախումբ՝ հաբեթականը և նրա տարածումը երկրի վրա և որ հաբեթականն ու հնդեվրոպականը կարող են խաչաձևվել և պատմական ուսու հողի վրա առաջացնել նոր որակ հանդիսացող խառը տիպի լեզու և խառը տիպի ժողովուրդ, որպիսիք Մառը համարում էր հայերենը և հայերին:

Ավելի ուշ Մառը հակադրվեց բուրժուական ուսուցիչին հնդեվրոպաբանությանը ամբողջությամբ վերցրած և խարխիւլով նրա իդեոլոգիական մեթոդոլոգիական հիմքերը, քննադատության ենթարկեց (սկսած 1922 թ.) և մերժեց նաև միգրացիոն տեսությունը:

Իրենց հնդեվրոպական լեզուները Մառի կարծիքով առաջորեն տարբեր և միգրացիայով տարածվող լեզուներ չեն, այլ լեզվի զարգացման հատուկ աստիճանի ծնունդն են հանդիսանում:

«Լեզուների հնդեվրոպական ընտանիքը, տիպաբանական իմաստով, նաև ըստ նյութի՝ նոր անտեսական-հասարակական պայմանների ստեղծագործություն է հանդիսանում, իսկ գերապրուկային ձևով, նաև ըստ բազմաթիվ կառուցվածքային մասերի — դա միջերկրածովյան շրջանի իրենց տեղական կամ հաբեթական լեզուների հետագա վիճակն է, նրանց զարգացման որոշ ստադիայում, մի խոսքով ըստ կառուցվածքի — դա նոր ֆորմացիա է»¹:

Այս ստադիալ մոտեցման դիրքերից դիտելով «այնպիսի

¹ Н. Я. Марр. Яфетическая теория, Баку, 1928 г., стр. 9.

ականայտ հիբրիդները, ինչպես, օրինակ, Հայաստանի լեզուները¹, մասամբ և արանական լեզուն ոչ քե հնդեվրոպական լեզուների՝ հարեթականների հետ խաչաձևման մարմնացումն են, այլ մաքուր հարեթական և կատարյալ հնդեվրոպական լեզուների միջև՝ միջանկյալ էտապի անցողիկ վիճակն են ներկայացնում, դրանք հարեթական ընտանիքի նախապատմական վիճակից հեռացած և լիովին հնդեվրոպականության չհասած լեզուներ են²։

Այդպիսով Մաուր 1928 թ. հայերենի հնդեվրոպական շերտը դիտում էր որպես հետևանք նույն տեղական հայերին լեզվի դարգացման նոր ստադիայի։ Մաուր մերժեց հնդեվրոպական և հարեթական լեզուների խաչաձևումը հայերեն լեզվի առաջացման հարցում, դրանով իսկ Մաուր վերանայելով մերժեց իր նախկին տեսակետը հայ ժողովրդի տեղական և եկվոր էլեմենտների խաչաձևումից առաջացած լինելու մասին։

Մաուր քննադատում է տարբեր ռասաների, ժողովուրդների հակադրությունը մեկը մյուսին և հերքում է այն տեսակետը, որով «լեզվի նոր տիպերի առաջացման հարցի ամբողջ ծանոթությունը դրվում էր միգրացիայի վրա, իրենց ծագումով նոր ժողովուրդների երևալու և եկվոր ցեղերի լեզվի՝ տեղաբնակ հարեթական ցեղերի լեզուների հետ խառնվելու վրա»։

«Միգրացիաները և նրանց հետ կապված խաչավորումները բոլորը արտաքին գործոններ են»³, — գրում է Մաուր։

Մաուի աշակերտներից Ի. Մեշչանինովը շուտով առիթ ունեցավ քննադատելու հայ ժողովրդի կազմավորման միգրացիոն տեսությունը վերջին խոսքը, որը գալիս էր բուրժուական արևմուտքից։ 1930 թ. Մարկվարտը լույս էր ընծայել «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքները» աշխատությունը, որտեղ կրկնում էր իր կողմից 11 տարի առաջ արտահայտված տեսակետը հայ ժողովրդի Բալկաններից եկած լինելու վերաբերյալ։

1931 թ. քննադատելով Մարկվարտին Մեշչանինովը գրել է. «Իր զուտ ձևական համադրություններով Մարկվարտը մի ամբողջ տեսություն է կառուցում հայերի միգրացիայի վերաբեր-

¹ Մաուր երկու հայերեն լեզու էր ընդունում՝ ֆեոդալական գրաբարը «Բ» հոգնակի մասնիկով և ժողովրդական խոսակցական լեզուն՝ «Բ» հոգնակի մասնիկով։

² Н. Я. Мавр, Яфетическая теория, стр. 9. (Ընդգծումը մերն է. Բ. Ա.)։

³ Նույն տեղ, էջ 8—9

յալ: Նրանց [հայերի] անվան հնչյունական նմանութունները հիման վրա առաջ է քաշվում նրանց գաղթի սխեման և, նույն-
իսկ, անց է կացվում շարժման ուղին: Այս երեքուն հոդի վրա էլ հանգչում է գաղթերի տեսությունը: Հայագետ Մարկվարաբ
նրա մոլի կողմնակիցն է: Եվ այնքան է տարված նրանով, որ միտք
անգամ թույլ չի տալիս՝ տեղում կատարվող (АВТОХТОН) ձևա-
փոխությունների մասին, որոնք տվել են այն, ինչ անվանվում
է Անդրկովկասի պատմության հայկական շրջան: Ուսումնասի-
րության հիմքում կանխակալ կերպով ընդունված անփոփոխելի-
ությունը հարկադրում է նույնիսկ այդպիսի «լայն մտքի» տեր
գերմանական գիտնականին հրաժարվել ուսումնասիրվող հարցի
իբրեք լայն դրվածքից և կենտրոնանալ Փոքր Ասիայում կամ
Եվրոպայի հարավում հայերի նախահայրենիքը որոնելու վրա,
ուր նրանք, իբրև թե, վերջնականապես կազմավորվել են և որտե-
ղից նրանք իրենց պատրաստի ձևերը փոխադրել են Կովկասյան
երկու գետերի ավազանը: Հաստատուն որոնումներ են¹, — տեղին
իբրենիայով ասում է Մեղչանինովը:

Հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսությունը
1932 թ. քննադատել է նաև Ա. Ղաբրիյանը:

Պատահական չէ, որ հայերի՝ հնդեվրոպական ժողովուրդ-
ների խմբին պատկանելու և նրանց՝ հարավային Եվրոպայից
(Բալկաններից) Հայաստան ժրենց նոր հայրենիքը՝ գաղթելու
տեսությունը մշակվեց ռեակցիոն արևմուտքի, մանավանդ իտ-
ալերիալիստական Գերմանիայի գիտնականների կողմից. մի տե-
սություն, որը կապված էր Մերձավոր Արևելքում Գերմանիայի
զավթողական հաշիվների հետ: Նույնչափ պատահական չէ, որ այդ
տեսությունը որդեգրվեց հայ ժողովրդի պատմական բախտը արև-
մուտքի իմ պերիալիստական գիշատիչների հետ կապող հայ խոշոր
բուրժուազիայի և նրա դաշնակցական պարտիայի գաղափարա-
խոսությամբ ներշնչված պատմաբանների կողմից: Մանավանդ
այդ տեսությունը շոյում էր հայկական բուրժուազիայի և աղ-
գայնական ինտելիգենցիայի աղգային ինքնասիրությունը:

Եզան և գիտնականներ, որոնք անդիտակցաբար ենթարկ-
վեցին աղգայնական մտայնությանը և կամ անքննադատո-
րեն ընթացան «լուսավոր» Եվրոպայի գիտնականների հետքե-
րով:

¹ См. Сообщение ГАИМК, 1931, № 9/10, стр. 35.

Սովետական գիտությունը մերժելով հնդեվրոպական լեզվաբանությունը և պատմագիտության դադափարախոսությունը, նրա հետ միասին և ամեն ինչ դուրբն, բայց գոհիկ ձևով բացատրվող միգրացիոն տեսությունը, մերժել է այն նաև հայ ժողովրդի առաջացման հարցում:

Սակայն վերջնականապես հաղթահարված են արդյոք հնդեվրոպաբանությունը և նրա միգրացիոն տեսությունը մեզ մոտ, Սովետական Հայաստանում և այս հարցերում Սովետական Հայաստանի բոլոր գիտնականներն են համաքայլ ընթանում Միությունից առաջվոր գիտնականների հետ: Դժբախտաբար փաստերը իբրավունք չեն տալիս այդ բանը պնդելու: Հնդեվրոպական լեզվաբանությունը և նրա հիմքի վրա ստեղծված հայագիտությունը մեզ մոտ դեռ առանձին հարցերում որոշ գիտնականների մոտ իրեն զգացնել է տալիս:

Անհրաժեշտ է վերջնականապես հաղթահարել հնդեվրոպաբանությունը, խորապես գիտակցելով, որ հնդեվրոպաբանությունն ինք կառչած մնալը հետադիմություն է, և որ հայագետի առաջադեմ լինելը որոշվում է նրանով, թե՞ նրա չափով է կարողացել տիրապետելով մարքա-լենինյան մեթոդոլոգիային, այլև ուսումնասիրելիք բնագավառի նյութի ամբողջությունը, հասնել սովետական գիտության բարձր մակարդակին և այդ մակարդակով գիտա-հետազոտական ստեղծագործ աշխատանք կատարել ու առաջ մղել սովետական գիտությունը, համարձակ նայելով դեպի առաջ:

Սակայն դառնանք փաստերին:

1931 թ. Հայկական Պետական Հրատարակչությունը լույս է ընծայել պրոֆ. Ս. Սամուելյանի (այժմ հանգուցյալ) «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության առաջին հատորը, որի մեջ հայերը ներկայացված են, ինչպես Մարկվարտի մոտ, որպես արդեն պատրաստի ժողովուրդ, որը գաղթելով Թրակիայից (Բալկանյան թերակղզում), եկել են Փոքր Ասիա, այնտեղից Փոքր Հայք, այստեղից էլ «շարունակելով իրենց նվաճողական առաջխաղացումը՝ հայերը հետզհետե տարածվում են Մուշի կամ Տարոնի դաշտում ու Վանյան երկրում, այնուհետև բարձրանում Եփրատի և Դիլի և մոտավորապես 5-րդ դարի սկզբներին հասնում են Արաքսի հովտին, տիրում են Արարատյան դաշտին: Այստեղ նրանք ամբողջովին իրենց ազդեցությանն են ենթարկում այն բոլոր խաղական մնացորդները, որոնք իրենց հայրեն-

նակիցների մյուս մասի հետ չէին քաշվել հայերի նվաճողական ընթացքից դեպի հյուսիս՝ Կովկասյան լեռները և դեպի հարավ»։ (էջ 93)։

Ամեն ինչ պարզ է ու հասարակ. հայերը պատրաստի ժողովուրդ էին, Եվրոպայից եկան, միառժամանակ էլ պարեցին Փոքր Ասիայում, ապա նվաճեցին Հայաստանը, տեղի բնակչության այն մասն էլ, որը չկարողացավ խույս տալ նվաճողներից, ենթարկվեց նրանց և ամեն ինչ վերջացավ։ Ել ինչու գլուխ ջարդել հայերի կազմավորման բարդագույն պրոցեսը լուստրանելու համար։

Հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսության քննադատությունում Հայաստանում դեռ 1932 թ. հանդես գալով Ա. Ղարիբյանը իրավացի կերպով այդ հարցը կապեց հնդերոպական լեզվաբանության հիմքերի քննադատության հետ։

«Ներածություն հայոց լեզվի պատմության» 1932 թ. լույս տեսած իր աշխատության մեջ Ղարիբյանը քննելով հայ ժողովրդի առաջացման հարցը, հզրակացնում է. «Այսպիսով հայերը և ոչ մի տեղից չեն եկել և ոչ մի հզոր ռասայի ճյուղ չեն կազմում, այլ տեղական տոհմական կեցության մեջ ապրող հասարակությունների փոխադարձ ներձուլման, սոցիալ-քաղաքական և տնտեսական ներթափանցման և արտադրողական ուժերի զարգացման հետևանքով առաջ եկած նոր էթնիկական գոյացում են, նախնական ֆեոդալական հասարակության գոյացման հիման վրա»¹։

1937 թ. վերադառնալով նույն հարցի քննարկմանը ընկ. Ղարիբյանը գրում է. «Հատ և շատ տոհմեր, առնվազն երկու հարյուրի սահմաններում, միանալով՝ ֆեոդալական հասարակության կազմության և այդ պրոցեսի ավարտման հիման վրա՝ գոյացրել են հայկական էթնոսը։ Այդ տոհմերի ղեկավար խմբերը դարձել են հայ էթնոսի ֆեոդալներ, տերեր, տանուտերեր (հայ տոհմական նախարարներ), իսկ ստորագույն հողին կալած մասը դարձել է լեզվաբանորեն ասած, բարբառախոս ժողովուրդ, որ դարձել է ճորտ գյուղացի»²։ Նշելով, որ ընկ. Ղարիբյանը սկզբունքային ճիշտ գիրքներից է քննադատում հնդերոպական լեզ-

¹ Ա. Ղարիբյան, Ներածություն հայոց լեզվի պատմության, Երևան, 1932, էջ 66։

² Նույնի, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 68-69։

վարանությունը և հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսությունը, միաժամանակ չենք կարող համաձայնել նրա հետ՝ 200-ից ավելի տոհմերի համաձուլումից, ֆեոդալական հասարակության գոյացման պրոցեսի սվարտի հիման վրա հայ էթնոսի կազմավորման և գյուղացիության ճորտացման հարցում: Կողք-կողքի ապրող 200 տոհմերից ժողովուրդ չի կարող գոյանալ: Մինչև ժողովրդի գոյացումը տեղի է ունենում տոհմերի միավորումը ցեղերի մեջ, տոհմական հասարակության քայքայումը առաջ է գնում այն աստիճան, որ աշխատանքի հասարակական բաժանման, արտադրողական ուժերի զարգացման հիման վրա քայքայվող տոհմերից և ցեղերից առաջ է գալիս ցեղային խմբակցությունը, սկզբնավորվում է գուլքային տարբերությունը, մասնավոր սեփականությունը և նրա հիման վրա կազմված նահապետական ընտանիքներից բաղկացած գյուղական համայնքն է բռնում տոհմի տեղը: Դա տոհմական հասարակության քայքայման վերջին շրջանն է, տոհմացեղային ավելի փոքր խմբակցությունները միավորվում են ռազմացեղային միությունների մեջ, որոնցից և բաղկանում է կազմավորվող ժողովրդի կորիզը: Ցեղային միությունների զարգացման հաջորդ քայլը տառնում է դեպի ժողովրդի կազմավորումը: Ձի կարելի համաձայնել ընկ. Ղարիբյանի հետ, երբ նա տոհմական հասարակությունից անմիջապես բխցնում է ֆեոդալական հասարակությունը, հայ ժողովրդի առաջացումն էլ (7—2-րդ դ.դ.) կապում է ֆեոդալիզացիայի պրոցեսի ավարտի հետ և գյուղացուն վերադրում է ճորտացած վիճակ, մի րան, որը տեղի է ունեցել շատ դարեր հետո¹:

1941 թ. Երևանի Պետական համալսարանի հրատարակությունը լույս է տեսել պրոֆեսոր Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության առաջին մասը, որը խիստ արժեքավոր նյութեր է պարունակում հայ լեզվի ֆակտուրայի, հնդեւրոպական արմատների և զանազան ժողովուրդների լեզուների՝ հայերենի վրա թողած ազդեցությունների, կամ այլ խոսքով՝ հայերենի փոխառյալ բառամթերքի վերաբերյալ:

Սակայն հեղինակը լինելով հնդեւրոպական լեզվաբանության հետևորդ, մագաչափ անգամ չի շեղվում նախացեղի, նա-

¹ Տե՛ս նաև պրոֆ. Ա. Ղարիբյանի «Սովետական հայագիտության հիմունքները», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1948 թ., № 1, էջ 15—39:

խալեզվի, նախահայրենիքի և անտեղից պատրաստի ժողովրդի և լեզվի անփոփոխ ձևերի միգրացիայի՝ կանոնի վերածված տեսություններից: Հայ ժողովուրդն էլ բերվում է հնդեհական լեզուների կարճեցյալ բուն նախահայրենիքից, այսինքն Ղիտվայից — հենտոնական եվրոպայից՝ Ռուսիայի, Բալկանների վրայով Փոքր Ասիա, ապա Հայաստան:

Այդ գրքին կցված առաջաբանում նրա հեղինակ դոցենտ Գ. Սեվակը նշելով հանդերձ պրոֆ. Աճառյանի մեթոդությունը և մեթոդի սխալականությունը, սակայն չի տվել նրանց քիչ թե շատ ընդարձակ քննադատությունը:

Պրոֆ. Աճառյանի աշխատության ավելի սկզբունքային ու ծանրակշիռ քննադատությունը գտնում ենք պրոֆ. Գ. Ղափանցյանի՝ նույն 1941 թ. «Սովետական Գրականություն» ամսագրի № 1-ում զետեղված «Հայերենի և հայերի գոյացման շուրջը» հոդվածում, սակայն այստեղ հեղինակը միաժամանակ վերին աստիճանի զուսպ է և քննադատությունը իդեոլոգիական անհրաժեշտ կոնֆլիկտի չի հասցնում:

Հայ ժողովրդի պատմության ձեռնարկում, որը լույս է ընծայել ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Պատմության ինստիտուտը 1943 թ., հայ ժողովրդի կազմավորման միգրացիոն տեսությունը որոշ այլափոխություն է կրել: Այստեղ ասվում է, թե «VII դ. մի կողմից՝ կիմերների, սկյութների, իսկ մյուս կողմից՝ ասորեստանցիների ու մեդացիների (մարերի) անդադար արշավանքների ու պատերազմների և դրանց հետևանքով երկրում առաջացած տալիստիվայությունների ու ժողովուրդների տեղաշարժումների ու նոր պետական կազմավորումների ժամանակ հանդես են գալիս արմենները. նրանք VII դարում տարածվում են Փոքր Ասիայի արևելյան մասում, որը հետագայում հայ պատմագրության մեջ Փոքր Հայք կոչվեց: VII դարի վերջերին VI դարի սկզբներին արմենները շարժվելով դեպի արևելք, հաստատվում են Հայկական բարձրավանդակում: Այդ երկիրը, ուր հաստատվեցին արմենները, նրանց անունով էլ Արմենիա կոչվեց»:

Բայց այս անգամ «խաղաղիկները» խոչն ունենում են իրենց անվանումների առջև, այլ արմենները և «խաղաղիկները» «անընդհատ պատերազմներ էին մղում իրար դեմ», բայց Կյուրոսի միջամտությամբ խաղաղություն է հաստատվում նրանց միջև և «այդ հաշտությունը հնարավորություն էր տալիս արմեններին խաղաղ

դրացիական հարաբերություններ ունենալ խաղալինիների հետ և աստիճանաբար թափանցել նրանց երկրի խորքերը, մի հանգամանք, որ նպաստում էր աշխտեղ հաստատվող արմենների և խաղալինիների տերիտորիայում բնակվող մյուս ցեղերի միաձուլման»։ (Տես ձեռնարկի 39—40 էջերը)։

Այստեղ էլ ժողովրդի կազմավորման պատմությունը չկա։ Արմենները հանկարծ չգիտես ինչպես երևան են գալիս և շարժվելով Փոքր Ասիայի արևմուտքից (Փոյուզիայի անունը չի տրված) արևելք, մտնում են Հայաստան (ուրեմն տեղացի չէին, այլ եկվոր), հետո տեղի է ունենում միաձուլում։ Գրքի այս մասի հեղինակն է նույն պրոֆ. Ս. Սամուելյանը, տեսությունն էլ նույններդաթի տեսությունն է, սակայն մյուս հեղինակները և խմբագիրները կրճատել են հայերի գաղթի առասպելի առաջին մասը (Բալկաններից եկած լինելը) և ավելացրել են տեղացիների ոչ թե մի մասի, այլ ամբողջ մասսայի հետ միաձուլվելը։

1944 թվին Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտը հրատարակեց հայ գրականության ականավոր ուսումնասիրող Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության առաջին հատորը։ Այդ աշխատության խոշոր արժեքը հանրահայտ է։ Սակայն առաջ քաշելով մեզ հետաքրքրող հարցը, հեղինակը կրկնում է Մարկվարտի և ուրիշների տեսակետը արմենների՝ Բալկաններից Փոյուզիա, այնտեղից էլ Հայաստան գալու վերաբերյալ։ Իսկ տեղաբնակ «ալաբոսցիներն» էլ «մատիենների հետ (Ուրմիո լճի վրա) կազմելիս են եղել մի առանձին շրջան»։ (Տես էջ 8—9)։

Աբեղյանը միաժամանակ բերում է Մառի կարծիքը հայերեն լեզվի զարգացման հարեթական ստադիայից հնդեուրոպականին անցնելու վերաբերյալ։ Սակայն նրա կարծիքով հայերենը «մի խառնուրդ լեզու է»։ Այստեղ սինթեզի և զարգացման պրոցեսը չկա, հայերենը տարբեր լեզուների մեխանիկական խառնուրդ է դուրս գալիս։

Եկվոր արմենների հետ են խառնվել և ձուլվել ուրիշ ժողովուրդներ նրանց գաղթի ճանապարհին և նոր հայրենիքում։ «... խառնուրդ է և հայ ցեղը, որ իր հետ ձուլել է ուրարտացիներին և ուրիշ շատ հարևաններ։ Այսպես՝ Փոքր Ասիայում և Ուրարտական երկրում տեղի ունեցած խառնուրդներով կազմվել է հայ էթնոսը—հայ ժողովուրդը և իր լեզուն» (էջ 10)։

Ինստիտուտի կողմից հատորին կցված առաջաբանում գո-

վասանքների կողքին բացակայում է նրանում տեղ գտած սկզբ-
քունքային խոշոր սխալների ու թերությունների քննադատու-
թյունը, նույնիսկ չի էլ նշված նրանց առկայությունը, որպեսզի
ընթերցողն ինքը կողմնորոշվի¹։

Վերջապես 1945 թ. ապրիլ. Մանանդյանը Հայպետհրատի
հրատարակությամբ լույս է ընծանել իր «Քննական տեսություն
հայ ժողովրդի պատմության» աշխատության առաջին հատորը,
որի շարադրությունն սկսված է արմենների գաղթով և բուն
աեքստի առաջին հինգ ստորերից հետո կարգում ենք. «19-րդ դա-
րում կատարված գիտական ուսումնասիրությունների ու մեծ
գյուտերի շնորհիվ արդեն անվիճելի կերպով պարզաբանված է,
որ այժմյան հայերի նախահայրերը հնդեւրոպական արմեններն
են, որոնք Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան, հավանորեն,
յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներում մեր թվա-
կանությունից առաջ» (էջ 7)։

Մի այլ էջում կարգում ենք. «արդի արեւելագետների ու հա-
յագետների մեծագույն մասը ընդունում են, որ հայերի նախա-
հայրեր արմենները թրակա-փույոզիական ցեղերի հետ միա-
սին գաղթել են Փոքր Ասիա Եվրոպայից Հելեսպոնտոսի վրայով»
(էջ 12)։ Գաղթն էլ Եվրոպայից Փոքր Ասիա «ենթադրվում է մո-
տավորապես 13-րդ դարի վերջերում կամ 12-րդ դարի սկզբնե-
րում մեր թվականությունից առաջ» (էջ 17)։

Այնուհետև խոսելով Հայկական Լեոնաշխարհի տեղաբնակ
ցեղախմբերի մասին՝ ապրիլ. Մանանդյանը եզրակացնում է.
«Պարզվում է ըստ այսմ, որ հայ ժողովրդի կազմավորման ըն-
թացքում եկվոր արմենների հետ միաձուլվել են ոչ միայն
խալդերը, ինչպես սովորաբար ենթադրվել է, այլև Հայկական
լեոնաշխարհի նախախալդյան հնագույն ցեղերը և, գլխավորա-
պես, Հայաստանի ոչ-հնդեւրոպական բնակիչները, որոնցից ար-
մենները ժառանգել են իրենց ու իրենց երկրի հայ ու Հայաս-
տան անունները» (էջ 33)։ Ապա «այժմյան հայերի նախահա-
յրերն են ոչ միայն հնդեւրոպական արմենները, այլև խալդերը և
Ուրարտայի տեղական այլ հնագույն ցեղերը» (էջ 34)։

Այսպիսով հայ ժողովրդի առաջացման հարցում արմենների

¹ Աշխատության ուսերեն հրատարակության մեջ առաջաբանի այդ
թերությունը մասամբ վերացված է։ (Տես М. Абебян—История древнеармян-
ской литературы, Ереван 1947 г., էջ XIII—XVI)։

ներգաղթին (միգրացիա) վերադարձում է վճռական նշանակութ-
յուն։ Ոմանց մոտ արմենները պատրաստի ժողովուրդ են և
նվաճում են Հայաստանը (Մարկվարտ, էդ. Մեյեր, Սամուելյան,
Աճառյան), ոմանք հայերին համարում էին եկվորների և տեղա-
բնակ «ժողովուրդների» մեխանիկական խառնուրդ (Արեղյան),
մյուսներն էլ ընդունում են եկվոր արմենների և տեղական էթ-
նիկ էլեմենտների խաչաձևումն ու միաձուլումը (Կրեյմեր, «Հայ
ժողովուրդի պատմություն» ձեռնարկ, Հ. Մանասյան)։

Առաջաձեման վերաբերող տեսակետն ընդունելի կլիներ, եթե
իրոք արմենների ներգաղթը իրական պատմական փաստ հան-
դիսանար, և եթե հարցի ուսումնասիրությունն էլ կատարվեր
պատմա-մատերիալիստական հիմունքներով և հիմնավոր փաս-
տերով։

Սակայն արմենների միգրացիան լոկ առասպելների և են-
թադրությունների վրա է կառուցված։ Վկայակոչում են հույն
պատմիչներին։ Հերոդոտը (5-րդ դար մեր թվ. առաջ) ասում է,
թե «Արմենները զինված էին փոյուզիացիների նման և փոյու-
զիացիների դադութն էին», իսկ 4-րդ դարի (մ. թ. ա.) հեղի-
նակ Նիզոքսոսը, արդեն, ասում է, թե «Արմենները ծագումով
Փոյուզիայից են և նրանց լեզվում շատ բան փոյուզերենից է»։
Ավելի ուշ 1-ին դարի (մ. թ. ա.) հեղինակ Դիոնեպիոս Հալի-
կառնասցին արմեններին ու փոյուզիացիներին համալեզու է հա-
մարում։ 1-ին դարի հեղինակ Ստրաբոնն էլ բերում է մի առաս-
պել, թե ղեպի Կոլխիդա նավարկած արգոնավորդների ղեկավար
Յասոնին ընկերակցում էր Արմենիոսը, Թեսալիայի Բոյբեյիս
լճից ոչ հեռու գտնվող Արմենիոն քաղաքից, թե սրա ուղեկից-
ները բնակվում են Ակիլիսենում, Սեսպերիտիսում մինչև Կալա-
քեն և Ադիաբեն, երկիրն էլ Արմենիա է անվանվել Արմենիոսի
անունով։ Իսկ մի այլ հեղինակ՝ (Անթիպատրը) Արմենիոսին
Ռոդոսցի է համարում։

Այս բոլոր վկայությունները զուրկ են պատմական հավաս-
տի հիմքից և պատկանում են հին աշխարհում հորինված նման
բազմաթիվ առասպելների թվին։ Հույները հորինել էին ոչ մի-
այն փոյուզիացիների Բալկաններից գաղթած լինելու և հայերի
նրանց հետ ունեցած ազգակցություն, այլև պարսիկների և մե-
դացիների Բալկաններից գաղթած լինելու առասպելները։

Իրենք հնդեվրոպաբան գիտնականներն էլ (Մեյեն, Մարկ-
վարտը) հիմնավոր չեն համարում հայերենի և փոյուզերենի

ազգակցությունը: Հույն հեղինակներն անմիջական վկայություններ չեն բերում հայերի Բալկաններից գաղթած լինելու վերաբերյալ (եթե չհաշվենք Ստրաբոնի պահպանած առասպելը արգոնավորդ Արմենիոսի մասին), և եվրոպական գիտնականները (Մարկվարտ) շտապում են հնագույն առասպելները «հաստատել» 20-րդ դարում իրենց կողմից հորինված առասպելով:

Հնդեվրոպաբան գիտնականներին հատուկ՝ դուռ ձեական, հնչյունային նմանությունների պատահական օրինակներ որոնելով, գտնում են հայերի արմեն անունը հիշեցնող ցեղերի և տեղերի անունները՝ Հոմերոսի մոտ արիմներ, Թեսալիայում Արմենիոն քաղաք, այնուհետև Մինոպի մոտ էլ, Սև ծովի ափին, գտնվում է Հորմոնիոն քաղաքը և Օրմենի սարը և այս ամենի խախուռ հիման վրա գծվում է արմենների գաղթի ուղին:

Ահա հայերենը հնդեվրոպական լեզու համարելու և միգրացիոն տեսության մեկնակետից ելնող, առասպելական հիմքի վրա կառուցված և գիտնականների (Մարկվարտ և ուրիշներ) կողմից հորինված առասպելով «գիտականություն» աստիճանի բարձրացված տեսակետն է, որ համարվում է «անվիճելի ապացուցված»: Անգամ Հայկի և Բելի վերաբերյալ Մովսես Խորենացու բերած տեղեկությունները իրական պատմական անցքերի (Ասորեստանի և Ուրարտայի միջև պայքարի) առասպելական վերհուշեր են հանդիսանում, իսկ հայերի Բալկաններից եկվոր լինելը առասպելաց առասպել է:

Հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսությունը միանգամայն զանց է առնում Հայկական Լեռնաշխարհի ընդերքի հնագույն պատմությունը: Ահադ. Մանանդյանն այդպես էլ վարչում է: Ընդունելով, թե արմենները 7 կամ 6-րդ դ. դ. մ. թ. առաջ են եկել և զբաղել Ուրարտայի երկրները, նա Հայաստանի ընդերքի պատմությունը հայ ժողովրդի կազմավորմանը նախորդող շրջանում, նույնիսկ 7-րդ, 6-րդ և հետագա դարերում բոլորովին անտեսում է: Իր հիշյալ աշխատության մեջ ակադ. Հ. Մանանդյանը մի քանի դուռ նվիրելով արմենների կարծեցյալ ներգաղթին, միաժամանակ ոչ մի էջ չի զբոսնում տեղական բնակչության հասարակական զարգացման և պետություն ու ժողովուրդ կազմավորելու հարցերի մասին:

Սակայն պետք է նկատել, որ Հայաստանի տեղաբնակ ցեղերի հասարակական զարգացումն էր, որ պատմական որոշ ժամանակաշրջանում հանգեց հայ ժողովրդի կազմավորմանը, որը

արական իմաստով իրականացավ ու դրսևորվեց հայկական պետականության կազմավորմամբ: Հետևաբար չի կարելի հայ ժողովրդի և նրա պետականության առաջացումը կտրել նախորդ շրջանից և կամ Հայաստանի պատմության հնագույն շրջանը մինչև 6-րդ դ. մ. թ. առաջ դուրս նետել հայ ժողովրդի և նրա երկրի պատմությունից:

Հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել հայկական հողի վրա, տեղական էթնիկ տարրերի բազայի վրա և տեղական, հասարակական, պատմական, էթնիկ և կուլտուրական միջավայրում: Այդ կարելի է հանգամանորեն ցույց տալ հովհանիս, Փաբր Ասիայի և ամբողջ Առաջավոր Ասիայի հասարակական զարգացման ընթացքի, քաղաքական պատմության, կուլտուրական և էթնիկ միջավայրի փաստերով և իրեն՝ հայ ժողովրդի նյութական և հոգևոր կուլտուրայի, լեզվի, տեղանունների, տոհմանունների, նույնիսկ մարդաբանական կազմի տվյալների հիման վրա: Սակայն այդպիսի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեծ և երկարատև աշխատանք է պահանջում և այսպիսի մի հոգվածում այդ նպատակը չենք էլ հետապնդել: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, պրոֆ. Գր. Ղափանցյանի «Հայաստան — հայերի ընթրիան» գիրքը տվյալ հարցը քննարկող առաջին լուրջ և ծանրակշիռ աշխատությունն է հանդիսանում:

Ներկա հոգվածում սահմանափակվելու ենք մի քանի թուղթիկ դիտողություններով, որոնք հայ ժողովրդի առաջացման միջրացիոն տեսության քննադատության տեսակետից կարող էին բավարար համարվել, սակայն հայ ժողովրդի կազմավորման պատմության լուսաբանությունը բավարար չափով չեն տալիս և ավելի շուտ ընթերցողին միայն ծանոթացնելու են քննարկվող հարցի դրության հետ:

Հայաստանում հնագույն բնակչության գոյությունը, շնորհիվ վերջին տարիներում կատարված գյուտերի, կարելի է հավաստել սկսած ստորին պալեոլիթից ամբողջ քարե դարի, բրոնզե դարի ժամանակաշրջաններում և հետո, այսինքն՝ սկսած վաղինի հորդանների գոյության ժամանակներից մինչև դասակարգային հասարակության և քաղաքակիրթ ժողովրդի առաջացումը և զարգացումը:

Տոհմական հասարակության քայքայումը Հայկական Լեռնաշխարհում, ինչպես կարելի է եզրակացնել հիերոգլիֆ և սե-

պագիր արձանագրությունների տված տեղեկություններից և հնազիտական նյութերից, սկսվել էր դեռ երկրորդ հազարամյակի կեսերից (մեր թվ. առաջ):

Պրոֆ. Գր. Ղափանցյանի «Հայասան — հայերի բնօրրան» աշխատության մեջ մանրամասն քննարկված է Հայասա ցեղային միության պատմությունը:

Դեռ 15-րդ դ. մ. թվ. ա. Փոքր Հայքի և Բարձր Հայքի տերիտորիաների վրա կազմավորվում է հայա ցեղերի Հայասա կամ Հայասա-Ազդի տոհմացեղային միությունը, որը մոտ երեք դար ռազմական ընդհարումների մեջ էր գտնվում խեթական պետության հետ, որի հետ պահպանում էր նաև քաղաքական ու տնտեսական հարաբերություններ: Դա ռազմացեղային միություն էր, որի առաջնորդին խեթերը «թագավոր» էին անվանում: Հայասան ուներ սեփական զորք, բավականաչափ զարգացած տնտեսություն և կուլտուրա: ¹

13—10-րդ դ. դ. ասորական բեեռագիր արձանագրությունները պատմում են Վանա լճի շրջանի նաիրյան և ուրարտական 60-ից 23 թագավորների մասին: Կասկածից զուրկ է, որ խոսքը վերաբերում է նաիրյան և ուրարտական ցեղերին, որոնք միավորվում են սկզբում նաիրյան, ապա ուրարտական ցեղային միությունների մեջ: Վերջինների հետագա զարգացման շնորհիվ էլ տալիս ուրարտական պետությունը, որն ավելի նպաստեց տոհմական հասարակության քայքայմանը:

Սակայն ուրարտական պետության տարբեր մասերում հասարակությունը գտնվում էր զարգացման տարբեր աստիճանի վրա: Մետաղագործության զարգացումը առաջին հազարամյակի սկզբներին Հայկական Լեռնաշխարհում՝ խոշոր չափով նպաստեց արտադրողական ուժերի զարգացմանը, մեծ զարկ ստացան անասնապահությունն ու երկրագործությունը: Հնազիտական նյութերը հնարավորություն են տալիս պնդելու, որ այս շրջանում խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը: Լեռնային վայրերի բնակչությունն առավելապես անասնապահությամբ էր զբաղված, իսկ դաշտավայրերի բնակիչները՝ առավելապես երկրագործությամբ:

¹ Տե՛ս Գր. Капанцян, Хайаса — колыбель армян. Издательство Академии Наук Арм. ССР, Ереван, 1947 г.

Մետադագործութեան առաջացումը նպաստում է արհեստների զարգացմանը, որը տանում էր դեպի աշխատանքի հասարակական երկրորդ բաժանումը՝ արհեստի երկրագործութունից բաժանվելուն։ Առաջանում է աշխատանքի գործիքների մասնավոր սեփականութունը, գույքային տարբերութունը։ Սկանի ավազանում և այլ վայրերում հիշյալ ժամանակաշրջանի դամբարանների պեղումները ցույց են տալիս ավելին քան գույքային տարբերութեան առկայութունը։ Սկանի ավազանում, օրինակ, հանդիպում են հարուստների և աղքատների դամբարաններ։ Տղամարդկանց դամբարաններն ավելի հարուստ են, քան կանանց դամբարանները, երբեմն տղամարդու հետ թաղված է լինում կինը, մի հանգամանք, որը ցույց է տալիս նահապետական ընտանիքի առաջացումը։

1906 թ. Մարտունու շրջանի Ադիաման գյուղի մոտ պեղված մի դամբանաբլուրում բացվեց հետևյալ պատկերը. ցեղի առաջնորդը թաղված էր մի քանդակազարդ սայլի վրա, որի շուրջ անկանոն ձևով ընկած էին ևս 13 կմախք, որոնք կարող էին սպանված և տիրոջ դամբարանում թաղված ստրուկների պատկանելի։ Ուրեմն առաջին հազարամյակի (մեր թվ. առաջ) առաջին կեսերին Սկանի ավազանում էլ սկսել էր ստրկատիրութունն առաջանալ։ Նախառարատական և ուրարտական շրջանից պահպանվել են բերդշենների և բերդաքաղաքների բազմաթիվ ավերակներ, որոնք նույնպես պատկանում են տոհմական հասարակութեան քայքայման և դասակարգային հասարակութեան առաջացման շրջանին։

Ուրարտական արձանագրութուններն էլ խոսում են տոհմական հասարակութեան քայքայման շրջանի երևույթը հանդիսացող տոհմացեղային խմբակցութունների և նրանց երկրների ու բերդերի վերաբերյալ։ Ռուսա I-ի (730—714) Սկանի ափին Բյուրադրան (այժմ Ծովինար) գյուղի մոտ թողած արձանագրութեան մեջ լճի հարավային ավազանում թվարկվում են 24 երկրներ, որոնցից չորսը համարվում են խոշոր երկրներ։ Կասկածից դուրս է, որ այստեղ էլ խոսքը վերաբերում է ցեղերին, ցեղային խմբակցութուններին և նրանց երկրներին։

Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին «Հայ ժողովրդի առաջացման մասին» առանձին գրքույկով լույս տեսած աշխատութեան մեջ նույն ուրարտական արձանագրութունների հիման վրա խոսում է Հայաստանի հարավ-արևմուտքում գտնվող Արմինա — Արմև

քերքի և ցեղախմբի մասին, որը նրա կարծիքով հայ ժողովրդի մեջ որպես հիմնական էլեմենտներից մեկը մտած տեղական արմենական էթնիկ խմբակցությունն է հանդիսացել:

Պրոֆ. Գր. Ղափանցյանը վերևում հիշված իր աշխատության մեջ ցույց է տալիս, որ Արմինյան տեղական արմենական-խոլերի առկայության ցեղային խմբակցություն էր հանդիսանում:

Տոհմացեղային խմբակցությունները, միությունները, որպես տնտեսական, կուլտուրական, քաղաքական, ազգակցական՝ առաջնահարկ բազմապատկվող և ամրապնդվող կապերով իրար հետ կապված մարդկային մեծ խմբակցություններ, առաջանում էին տոհմական կարգերի քայքայումով: Նրանց զարգացման հաջորդ քայլերը տանում էին դեպի դասակարգայնորեն շերտավորված, տերիտորիալ, կուլտուրական, լեզվական առավել կոմպլեքս ընդհանրության հիման վրա և պետական կազմակերպության մեջ միավորված ժողովրդի դոյացումը:

Այս պրոցեսի խորացման որոշ աստիճանի արդյունք հանդիսացող ութրտական պետությունը կիմերական և սկյութական արշավանքների ժամանակ թուլանալով, մեղական պետության հարվածների տակ 585 թ. կործանվեց: Դրանով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հայկական Լեռնաշխարհում առաջացած մի երկու ցեղային միությունների հզորացման համար:

Էնդելսը նշում է, որ ցեղերի միությունն արդեն նշանակում է նախադարյան համայնական հասարակության անկման սկիզբը¹: Էթնիկ կազմավորման պրոցեսը առաջ էր դնում տոհմական կարգերի քայքայման, աշխատանքի հասարակական բաժանման (արհեստը բաժանվում է երկրագործությունից) և դասակարգային տարբերությունների խորացման հիման վրա պետականության առաջացման ընդհանուր պրոցեսի հետ միասնաբար: Ուրարտական պետության անկումը հնարավորություն էր բաց անում, որպեսզի առավել զարգացած և հզոր տոհմացեղային միությունները, որպես առաջատար և զորեղ ուժ, իրենց շուրջը համախմբեին Հայկական Լեռնաշխարհի մյուս ցեղերին ու թույլ ցեղախմբերին և հանդես գալով նոր կազմավորվող

¹ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 129:

ժողովրդի կողմից ղեկավարվող, իրականացնելու մյուս ցեղերի ասիմիլիացիան և մեկ ժողովրդի մեջ համաձուլելու գործը: Դրա հետեւականքով էր, որ Էնգելսի խոսքերով ասած՝ «Լուկ իրար կողքի ապրող ցեղերի միութեան փոխարեն առաջ եկավ նրանց միաձուլումը, որպես մի միասնական ժողովուրդ»:¹

Պրոֆ. Գր. Ղափանցյանը ցույց է տվել, որ տոհմացեղային խմբակցությունների համախմբողի և ասիմիլիացիայի շնորհիվ է մի համաձուլողի դերում Հայկական Լեոնաշխարհի կենտրոնական և արևմտյան մասում հանդես է եկել Հայաստան տոհմացեղային միությունը, որը և իր անունը տվել է հայ ժողովրդին: Բ. Պրոտրովսկին և Ղափանցյանը հայ ժողովրդի կազմավորման գործում կարևոր դեր խաղացած մի երկրորդ ցեղային միություն էլ, ինչպես ասացինք, համարում են Արմինա = Արմե ցեղախումբը, որը հայ ժողովրդին տվել է նրա Արմեն անունը:

Հայաստան ցեղային միությունն ընդարձակվում է դեպի արևելք, մանավանդ դեպի հարավ-արևելք, իրեն հետևելով և ասիմիլիացիայով իր մեջ ձուլելով մի քանի այլ ցեղախմբեր: Վերջիններս 6—5-րդ դ. առաջին հազարամյակում Հայաստան և Արմեն ցեղախմբերի միավորումը, ղրանով կազմավորվում է հայ ժողովրդի կորիզը: Այդ տեղի է ունենում Հայկական Լեոնաշխարհի մնացած մի շարք ցեղախմբերի, նաև ուրարտացիների զգալի մասի, ինչպես և Հայկական Լեոնաշխարհում հաստատված սկյութական խմբերի ասիմիլիացիան: Այս ամենի արդյունքն է լինում հայ ժողովրդի կազմավորումը:

Ժողովրդի և պետության կազմավորումը, որպես տոհմական հասարակության քայքայման և դասակարգային հասարակության առաջացման հետևանք, տեղի են ունենում միասնաբար: Պետության կազմավորումը որոշ պայմաններում կարող է նախորդել ժողովրդի կազմավորմանը, համեմատելով դեպի ժողովրդի կազմավորումը տեղի է ունենում պետության մեջ: Բարբարոսական տիպի պետության մեջ ժողովրդի էթնիկ կազմավորումը դեռ շարունակվող պրոցես է:

Կազմավորվող պետության մեջ վարչական պաշտոնները պետական գաղափարով, դուքս են գալիս ցեղի կամ համայնքի շրջանակներից և ստանում են համապետական նշանակություն:

1 Յ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948 թ., էջ 145:

Վերևում ասվածից պարզ երևում է, որ հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել տեղաբնակ ցեղախմբերի հառաքական օրինաչափ զարգացման հետևանքով և տեղական էթնիկ շարքերի բազայի վրա: Այս պրոցեսն է, որ իր ամբողջ բարգուծվածք և օրինաչափություններով պետք է լուսաբանվի որպես հայ ժողովրդի գոյացման պատմական պրոցես: Սակայն միջբացիոն աեսությունը դրա հետ ոչ մի գործ չունի: Պետք է կոնկրետ փաստերով ցույց տրվի այդ պրոցեսի ընթացքը և կազմավորվող ժողովրդի կորիզի գեր խաղացած ցեղային միությունների վճռական նշանակությունը այդ պրոցեսի ամբողջ աեղություն ընթացքում:

Նման դեր խաղացած եկվոր էլեմենտի գաղթի մասին պատմական հավաստի տեղեկություններ չկան: Անվիճելի փաստ է կրմեքների և սկյութների ներգաղթը: Սակայն հայ էթնոսի մեջ ժաած կրմեքական կամ սկյութական էլեմենտները խոշոր նշանակություն չեն ունեցել:

Առաջավոր Ասիայի հասարակությունը առաջին հաղարամյակի երկրորդ կեսին (մ. թվ. ա.), ինչպես ասվեց, արդեն թևակոխել էր տոհմական հասարակության քայքայման, պետությունների և ժողովուրդների կազմավորման փուլը: Մի քանի երկրներում այդ գործը ավելի վաղ էր տեղի ունեցել, իսկ Հայաստանում և Հայաստանի անմիջապես հարևան երկրներում 7—2 դ. դ. մեր թվ. առաջ այն կատարվող փաստ էր, առանց արտաքին վճռական ազդակների:

Ամբողջ միջավայրի համար էթնիկ կազմավորումներն նպաստող հանգամանքներ, իհարկե, կարող էին լինել և կային: Օրինակ, քաղաքական հանգամանքները: Ասորա-բաբելական, արարտական պետությունները քայքայվել և կործանվել էին, դրան նպաստել էին կրմեքների, սկյութների ներառված, մեզական հզոր պետության առաջացումը, սկյութների դաշինքը մեզացիների հետ և դրա հետևանքով ուժերի վերադասավորումն ու նոր փոխհարաբերությունները:

Ավելի ուշ խոշոր դեր խաղաց պարսկական (6—4 դ.դ.) և Սելևկյան (3—2 դ.դ.) պետությունների գոյացումը, որպես ժողովուրդների կազմավորման պրոցեսը առաջ մղող հանգամանք, ապա և այս պետությունների քայքայումը և անկումը, որպես նպաստավոր պայման ձևավորվող ժողովուրդների, մասնավորապես հայերի

պետականութեան առաջացման համար, որով ամրապնդվում և հաստատվում էր այդ ժողովուրդների գոյութիւնը:

Հասարակական զարգացման միևնույն, կամ համարյա միևնույն պայմաններում և միևնույն էթնիկ միջավայրում այս կամ այն ժողովրդի կորիզը հանդիսացող ցեղային միութեան շուրջը կարող էին համախմբվել և նրա հետ համաձուլվել ավելի թույլ կամ իրենց կազմով ավելի հեղհեղուկ տոհմացեղային խմբակցութիւնները, որպէս բաղկացուցիչ էթնիկ էլեմենտ մտնելով մասամբ տվյալ, մասամբ էլ հարեան կազմավորվող ժողովրդի մեջ:

Այս ձևով հայ և վրաց ժողովուրդների մեջ մտել են մի շարք հարեան և ազգակից տեղական ցեղեր, առաջացնելով երկու ժողովուրդների լեզվի և կուլտուրայի որոշ էլեմենտների սերտ ազգակցութիւնը, որը հետագայում դարերի ընթացքում ավելի է ընդարձակվում:

Այն պնդումը, թե հայ ժողովուրդը կազմավորվել է տեղական ցեղախմբերից, ապացուցվում է նաև նյութական և հոգևոր կուլտուրայի տվյալներով:

Հայ ժողովրդի նյութական կուլտուրան 6-րդ դ. (մեր թվ. առաջ) Հայաստան եկած ժողովրդի բերովի կուլտուրա չէ: Այժմ անցել են այն ժամանակները, երբ ժխտվում էր քարե դարը Հայաստանում, երբ բրոնզն ու երկաթն էլ եվրոպական պիտանականների (Վիլկե, Ժակ դը Մորգան, Շանտր) կողմից համարվում էին ուրիշ տեղից բերված:

Այդ միգրացիոն անհեթեթ տեսակետը հերքվեց և մերժվեց նաև փաստական ընդարձակ նյութով: Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում այժմ, շնորհիվ սովետական իշխանութեան տաքիններին հայտնաբերված հնագիտական նյութի, կարելի է հետեւել տեղական կուլտուրայի հաջորդական զարգացման ընթացքին՝ սկսած ստորին պալեոլիթից մինչև բրոնզի-երկաթի մետաղագործական կուլտուրան, ըստ որում հայտնաբերվել են բրոնզի և երկաթի ձուլարաններ, բրոնզե իրեր ձուլելու կաղապարներ և արհեստանոցներ, որոնք մազաչափ անգամ տարակույս չեն թողնում մետաղագործութեան և մետաղներից պատրաստված իրերի և գործիքների տեղական ծագման վերաբերյալ:

7—2-րդ դ. դ. (երբ իբրև թե տեղի է ունեցել արմենների կարծեցյալ գաղթը) մետաղագործութիւնը, քարակոփութիւնը, բերդաշինութիւնը, դամբարանները, կավագործութիւնը, զեն-

քերը և այլ գործիքները նախորդ շրջանների տեղական կուլտուրայի օրգանական շարունակութունն են կազմում և ներքին օրինաչափ դարգացում են ունեցել։ Նոր եկած ցեղերի կամ ժողովուրդների բերովի կուլտուրայի մասին եթե խոսք լինի, ապա կարելի է հիշատակել միտյն և միայն սկյութական սլաքները, սերը և սկյութական ձիու կծախքները, ստնձը, որոնք գտնվեցին նաև Կաբմիր-բուրի պեղումների ժամանակ։ Այդ ժամանակաշրջանում արևմուտքից գաղթով բերված կուլտուրայի հետք անգամ չկա, իսկ ասորական և եգիպտական կնիքները և այլ առանձին իրերը, որոնք գտնվել են ուրարտական բնակավայրերում, այստեղ են բերվել փոխանակալի՝ հարաբերութունների և կուլտուրական կապերի շնորհիվ։

Նույնը կարելի է ասել և հոգևոր կուլտուրայի վերաբերյալ։ Գերմանական գիտնականները հասարակական համակեցության և հասարակական մտքի զարգացման միևնույն աստիճանով պայմանավորվող ընդհանրութունները տարբեր ժողովուրդների արվեստի, միջերի, կրոնական և այլ բնութագրերի մեջ բացատրեցին որպես հնդագերմանական ցեղի ստիզմացործած և զարթի միջոցով տարածած կուլտուրայի ընդհանրութուններ։ Նույնիսկ հորինվեց, այսպես կոչված, թափառական ասքերի և առասպելների տեսությունը, որ իբրև թե մեկ անգամ, մի տեղում ստեղծվելով՝ առասպելները թափառում են տեղից տեղ և տարածվում։

Այս հետաքննալի տեսությունը անհարիր է գիտելի տիկական մասերի արվածին և նրա հերքելը ոչ մի գծավորութուն չի ներկայացնում։ Սակայն իրոք տեղի ունեցող գաղթների ժամանակ գաղթողները բնականաբար իրենց հետ տանում են, իսկ ներգաղթողները կրեթին իրենց հոգևոր կուլտուրան, որը իհարկե կփոխակերպվեր և՛ գաղթի ճանապարհին, և՛ մանավանդ Վնոր հայրենիքում, բայց որը այս կամ այն ձևով ու չափով կպահպաներ նաև իր երանգավորումը և Թարբերութունները տեղաբնակ ցեղերի կամ ժողովրդի հնամենի ավանդութունների համեմատությամբ։ Կարող են արդյոք հնդեվրոպաբան գիտնականները և նրանց հետևողները նման երևույթ գտնել հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի մեջ։ Ի դեպ Մ. Աբեղյանը այդպիսի «թափառական ավանդություն» համարել է Հայկի առասպելը, գիտելով այն որպես Օրիոնի՝ Հայաստան եկած ավանդության կրկնակը¹։ Իսկապես Հայկը

¹ Տես Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899, էջ 262։

Օրիոնի հետ կապվում է, բայց ոչ թե որպես «թափառական ավանդություն», այլ տոտեմիզմի, նախնիների պաշտամունքի, ապա տիեզերական մարմնի (Հայկը և Օրիոնը նույն համատեղությունն են), ապա տվյալ ժողովրդի՝ աստվածացրած, բայց մարդակերպ նախահոր՝ մարդկային մտածողության հնագույն շրջանների զարգացման աստիճանները նշանավորող այս փոխակերպությունների ընդհանրություններով:

Հայկի առասպելը բերովի կամ եկովի չէ, նա ավանդական անդրադարձումն է ուրարտական և ասորական պետությունների միջև տեղի ունեցած պայքարի ու տեղական է ոչ միայն պատմականությամբ, այլև կոլորիտով: Տեղական հայկական կամ Փոքր Ասիական, Մերձավոր Արևելյան հնագույն միջավայրի հետ են կապվում նաև Տորք Անգեղի, Թորգոմի (Թոգարամա, ասորական Թիլ-Դարիմա), Նանեի, Վահագնի, Տիրի, Արա Գեղեցիկի, Անահիտի վերաբերյալ ավանդությունները: Տեղական են բազմաթիվ կենդանիներին և գաղաններին (եղ, առյուծ, արջ, վիշապ և այլն), թռչուններին (արագիլ, ագռավ, կաշաղակ, կռունկ, սինամհավ և այլն) նվիրված միֆական և սիմվոլիկ հասկացողությունները: Ուրեմն հոգեկան կուլտուրայի մեջ էլ եկվոր ցեղերի հետքերը չենք գտնում:

Հայկական ցեղանունները կամ տոհմանունները (հայկ — խեթական հայասա, սոմեխ — խեթական Սուխմա = ասորական սուխմե, Մանավազ (յան) տոհմ, Գնթունի, Արծրունի, Վահեունի, Բղնունի, Արեղյանք, Խոռխոռունի և այլն) կապվում են ուրարտա-խուրքիտական աշխարհի հետ, մյուսները (Արտաշեսյան, Արշակունի, Տիգրան, Կամսարկան, Պահլավունի) Պարսկաստանից են փոխ առնվել: Եվրոպայի հետ չի կապվում և ոչ մի տոհմանուն: Հընդերոպարանները Եվրոպայի հետ են կապում Արմեն անունը: Սակայն վերևում նշվեց Արմեն ցեղային միություն մասին, որը գտնվում էր Հայկ: Լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում:

Պրոֆ. Ղափանցյանը ցույց է տալիս, որ Արմեն անունը Փոքր Ասիական, խեթո-ուրարտական, ասորական արձանագրությունների մեջ հաճախ հանդիպող տեղական արամեական-խուրքիտական անուն է: Միայն երկու դեպք է հայտնի, երբ այդ անունը հանդիպում է Բալկաններում, և այդ ձևական նմանությամբ հիման վրա էլ հույն պատմիչները և եվրոպական գիտնականները կառուցել են, առաջինները՝ իրենց ավանդությունները հայերի

վերաբերյալ, իսկ երկրորդները՝ հայերի նվերապայից գաղթելու առասպելը:

Որքան ընդարձակվում է խեթո-ուրարտական արձանագրությունների թիվը, այնքան ավելի հայտնի են դառնում հայ ժողովրդի կապերը խեթո-խուրրո-ուրարտական-ասորական, Փոքր Ասիական և Կովկասյան աշխարհի հետ:

Այդ վերաբերում է մանավանդ տեղանուններին և լեզվին:

Արդեն հայտնի են մի քանի տասնյակ հնագույն տեղանուններ, որոնք գալիս են ուրարտական և խեթական բնիկներից (խեթ. Ալսե—ուրարտական Ալդինի—Աղձնիք, խեթ. Իսուվա—ուրարտ. Յուպա—Ծովք, էլզիթե—Հանձիթ, Ապուունի—Ապահունիք, Իխուունի—Տաոխ—Տաո—Տայք, Աբիլիանիխի—Աբեղենք, Սուլի—Սյունիք, Ախուրիանի—Ախուրիան և այլն և այլն): Սովորաբար գաղթականները իրենց նախկին բնակավայրի տեղանուններով կոչում են նոր բնակավայրի շատ տեղանունները: Թող միզրապիոն տեսության կողմնակիցները ցույց տան «հնդեւրոպական» արմենների կողմից բերված թեկուզ մեկ-երկու անուն, բացի կիմերների և սկյութների հետ կապված անուններից: Տեղական, Փոքր Ասիական է և հայերի մարդաբանական տիպը, որը նույնպես Բալկանների հետ չի կապվում:

Վերջապես հայերեն լեզուն, որը հնդեւրոպաբանների հիմնական արգումենտն է հայերին եկվոր համարելու, ոչ մի հիմք չի տալիս:

Հնդեւրոպաբանության անշեղ հետևորդ պրոֆ. Աճառյանի հաշիվներով հայկական բառարմատների թիվը 10996 է, որից հնդեւրոպական են 713 արմատ կամ 6,5 տոկոսից էլ պակաս: 713-ից էլ մոտ 300-ի դեմ լուրջ առարկություններ ունի Գր. Ղափանցյանը: Իսկապես հնդեւրոպական արմատներ մնում են ընդամենը 350—400, որոնք հազիվ կազմում են հայկական բառարմատների մոտ 3—4 տոկոսը:

Պրոֆ. Ղափանցյանի հաշիվներով միայն խեթերենից հայերենի մեջ մտած արմատների համեմատական տոկոսը նույնքան է, եթե ոչ ավելին: Զգալի տոկոս են կազմում այսպես կոչված հաբեթական արմատները, իսկ ոչ-հնդեւրոպական տեղական արմատների թիվը 5000-ից ավելի է, չհաշված բարբառներում հանդիպող արմատները:

Մաուր 1915 թ. հայերենը համարելով «հաբեթական» և հնդեւրոպական խառը տիպի լեզու, միաժամանակ նշում էր, որ վճռական դեբը պատկանում է տեղական, «հաբեթական» շերտին:

«Կուլտուրական կյանքի շատ կողմերը,—գրում է Մառը,— համարյա համատարած կերպով արտահայտվում են հաբեթական (այսինքն տեղական. Բ. Ա.) ծագում ունեցող խոսքերով. այսպես օրինակ՝ ծառերի և ընդհանրապես բուսական աշխարհի անունները, հողի մշակման և շինարարության տերմինները, երկրագործական գործիքների, մետաղների անունները՝ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ և կախարդանքի ու հմայության զանազան տեսակները և դրա հետ կապված՝ հաշիվ և թիվ հասկացողությունների համար բուն հայկական բառերը, անունները այն կենդանիների, որոնք կապված են Կովկասի հեթանոսական կուլտի հետ և ընդհանրապես այդ կուլտի տերմինները, ինչպես օրինակ՝ հզ, արջառ, ոչխար, զոհաբերվող անասուն, զոհաբերություն, անեծք և այլն... Բառեր այնպիսի հասկացողությունների համար, ինչպես երկինք, երկիր, ջուր, օդի—շնչառություն և հոգեկան աֆֆեկտների՝ վախ, ուրախություն և այն արտահայտող բայերի մեծ մասը»:

«Մի խոսքով,—եզրակացնում է Մառը,— հայերը Կովկասյան աշխարհի մյուս ժողովուրդների հետ միասին հաբեթական բնիկներից ժառանգել են հողագործությունը, մետաղագործությունը, կուլտը, առևտրի հիմնական էլեմենտները—ամբողջ խաղաղ կուլտուրան»:

«Հայաստանի նախնական սոցիալական կարգը, տոհմական կենցաղը իրենց բազմաթիվ տերմիններով, որոնք անցել են հետագա դասային (իմա. դասակարգային, Բ. Ա.) կարգերի տերմինոլոգիայի մեջ, ընդգրկում են կամ ամբողջովին հաբեթական (տեղական. Բ. Ա.) ծագում ունեցող բառերով, և կամ հաբեթական տերմինների իրանական, այն է՝ պարսկական թարգմանությունը հանդիսացող բառերով: Այնպիսի կենցաղային հասկացողություններ արտահայտող հայերեն բառեր, ինչպես տոհմ, ժողովուրդ, ազգ կամ ժողով—ժողովուրդ՝ մաքուր հաբեթական ծագում ունեն»:

Այնուհետև Մառը շարունակում է. «Արիո-եվրոպական էլեմենտները գերակշռում են ռազմական տերմիններում, զենքերին ու ռազմական հանդերձանքին և ազմինխտրացիային ու թագավորությանը վերաբերող անունների մեջ: Բայց այս տերմինները բոլորը, կամ համարյա բոլորը—իրանական, այսինքն պարսկական բառեր են»¹

¹ Н. Я. Марр, Кавказский Культурный Мир и Армения, стр 30—32.

Այսպիսով հայերենի բառապաշարը Մաքի կարծիքով տեղական, «հարեթական» է:

Մի փոքր ավելի մեծ է համարվում հնդեւրոպական շերտը հայերենի քերականութեան մեջ. Սակայն այս տեսակետն անվիճելի չէ նույնիսկ հնդեւրոպարան գիտնականների շրջաններում: Հնդեւրոպարանութեան խոշորագույն ներկայացուցիչ Մեյքին, օրինակ, ուսումնասիրելով հայերենի քերականութիւնը՝ եկավ այն եզրակացութեան, թե հայերենի հնչյունական և ձևաբանական սիստեմը խորապէս տարբերվում է հնդեւրոպականից: Դեռ 1915 թ. ակադ. Ն. Մաուը խոսելով հայերեն լեզվի օրինաչափութիւնների մասին, ասել է, թե «այն ամենը, ինչ հայերենին տալիս է ինքնատիպ, ինդիվիդուալ—հայկական բնույթ, կազմում է նրա առանձնահատկութիւնը թե հնչյունների, թե ձևերի, կամ բառերի ընտրութեան բնագավառում, այս ամենը ճշող մեծամասնութեամբ կամ ուղղակի գալիս է հարեթական (այսինքն տեղական, Բ. Ա.) լեզուների դանձարանից, կամ բացատրվում է նրանց օրենքների ազդեցութեամբ: Այս ամենը հայերին եղբոր պես ազգակից է դարձնում հարեանների հետ, Կովկասյան աշխարհի բուն ներկայացուցիչների, հատկապէս վրացիների հետ»¹:

Հնդեւրոպական համարվող բառարմատներն ու որոշ քերականական ձևերը, որոնք հետագա փոխառութիւններ չեն, կարող էին հայերեն լեզվի մեջ մուծվել տեղական՝ Փոքր Ասիական և եկվոր սկյութական հնդեւրոպական համարվող այն էթնիկ էլեմենտների կողմից, որոնք մտել են հայ ժողովրդի կազմի մեջ, որպէս նրա բաղկացուցիչ մասը: Որոշ բառեր և ձևեր էլ կարող էին յուրացնել իրենց հարեան հնդեւրոպական համարվող ցեղերից հայ ժողովրդի կազմի մեջ մտած առանձին ցեղախմբերը, բերելով իրենց հետ նաև այդ ժառանգութիւնը: Վերջապէս լեզուն ինքը ենթակա է զարգացման և փոխակերպութիւնների:

Ն. Մաուը գտնում էր, թե որոշ լեզուներ զարգանալով հարեթական համարվող ստադիայից՝ անցնում են հնդեւրոպական համարվող ստադիային: Հայերեն լեզուն էլ Մաուը համարում էր մաքուր հարեթական և կատարյալ հնդեւրոպական լեզուների միջև ընկնող միջանկյալ էտապի անցողիկ վիճակը ներկայացնող լեզու, որն հեռացել է հարեթական ընտանիքի նախնական վի-

¹ Նույն տեղ, էջ 30:

ճակից, բայց լիովին հնդերոպականության չի հասել: Ուրեմն հայերենը զարգացել է կցականից դեպի թեքական լեզու դառնալու, հնդերոպականանալու ուղղությամբ, բայց հնդերոպական չի դարձել, հետևաբար հայերենի հնդերոպական համարվող քերականական ձևերը Մառի մոտ բացատրություն են ստանում առավելապես իրեն հայերեն լեզվի զարգացմամբ: Հայտնի է, որ քերականական ձևերն ավելի են հնթական զարգացման և փոփոխման, քան բառարմատները:

Պրոֆ. Գր. Ղափանցյանը, առջև տանելով հայերեն լեզվի ուսումնասիրության գործը, նշում է, որ հայերենի զարգացումը և քերականական օրենքները անհասկանալի և անբացատրելի կմնային, եթե հայերենը համարվելով հնդեվրոպական լեզու, կարվեր իր կովկասյան, խեթո-խուրրո-ուրարտական բնական միջավայրից: Նա ցույց է տալիս, որ հնդեվրոպական այն շերտը, որը հայերենի մեջ մտել է որպես կազմավորվող լեզվի բաղկացուցիչ մաս, փոքր տոկոս է կազմում: Հայ ժողովուրդը Ղափանցյանի կարծիքով կազմվել է տեղական էթնիկ մատերիալի հիման վրա, հայերեն լեզուն էլ կազմավորվել է տեղում իրերոքարթվելական, խեթո-խուրրո-Փոքր Ասիական ուրարտական միջավայրում բնակվող և այդ միջավայրի հետ կապված էթնիկ տարրերի լեզուների հիման վրա:

Այսպիսով Հայկական Լեռնաշխարհի ամբողջ պատմությունը, այստեղի հասարակական զարգացման օրինաչափությունների կոնկրետացումը բոլոր գծերով՝ բնակչության զբաղմունքը և նյութական արտադրությունը, նյութական և հոգևոր կուլտուրան, հայ ժողովուրդը կազմող էթնիկ տարրն իր ավանդություններով ու լեզվով, — ահա այս ամենը անառարկելի կերպով ժխտում են հայ ժողովրդի և նրա լեզվի ու կուլտուրայի միգրացիոն տեսությունը և հաստատում են նրանց օրինաչափ առաջացումը տեղում:

Հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսությունից հիմնական արատն այն է, որ նա հայ ժողովրդի կազմավորումը կտրում է պատմական հողից, այն չի դիտում որպես ժողովուրդների կազմավորման համապատմական օրինաչափություններով առաջ ընթացող մի տեղական պատմական պրոցես, կտրելով պատմական միջավայրից, անտեսում է այդ պատմական պրոցեսի զարգացումը բացահայտող արդեն բավականաչափ առատ փաստական նյութը: Անտեսվում են տեղական էթնիկ տարրերը և

Հայկական Լեռնաշխարհի տոհմական հասարակությունից դասակարգային հասարակության, էթնիկ և պետական կազմավորման խորը պրոցես ապրող բնիկների իսկական պատմությունը փոխարինվում է միգրացիայի հետամնաց տեսությամբ, որով պատրաստի ժողովուրդը մի տեղից մյուսն է փոխադրվում: Մի տեսություն, որի հիմքը արևմուտքի ռեակցիոն բուրժուական իդեոլոգիայի մետաֆիզիկան է, և որն ուղեկցվում է արևմուտքի իմպերիալիստական պետությունների ռասայական, նվաճողական հաշիվներով:

Մերձավոր Արևելքի քաղաքական պատմությունը, Հայաստանում և նրա հարևան հրկրներում հայտարարված հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների, նյութական կուլտուրայի, հոգևոր կուլտուրայի (լեզվի, մտածողության, առասպելների, կրոնական ըմբռնումների), տեղանունների և ցեղանունների (այդ թվում և տեղական ծագում ունեցող արմեն և հայ անունների), բնակչության մարդաբանական տիպի ազդագրության — այս բազմազան աղբյուրների տվյալների ամբողջությունը այժմ արդեն բավարար հնարավորություններ է ընձեռում պարզելու տեղական այն էթնիկ տարրերը, որոնցից կազմվել է հայ ժողովուրդը (առանց ժխտելու եկվոր էլեմենտի՝ կիմերների, սկյութների դերը), բացահայտելու տեղական հասարակության զարգացման աստիճանը և հետևելու նրա փոփոխությունների դասավոր պրոցեսին, հետևելու աշխատանքի հասարակական բաժանման և հասարակության սոցիալական շերտավորման խորացող պրոցեսի առաջընթացին, որը անխուսափելիորեն տանում էր դեպի հայ ժողովրդի և նրա պետականության կազմավորումը:

Հիշյալ բնագավառների նյութի ուսումնասիրությունը բերում է այն համոզմանը, որ

1) հայ ժողովրդի և նրա պետականության կազմավորումը 7—2 դ.դ. (մ. թ. ա.) պատմականորեն տեղի ունեցող պրոցես էր և հանդիսանում էր հասարակության ներքին զարավոր զարգացման արդյունք:

2) Հայ ժողովուրդը կազմվեց տեղական էթնիկ տարրերի հիման վրա, բաղմաթիվ էթնիկ էլեմենտներ (ցեղեր, ցեղական խմբակցություններ, դրանց թվում և ուրարտացիների մի մասը) մտել են հայ ժողովրդի մեջ, սակայն ասիմիլիացիա կատարողի դերով հանդես են եկել զարեբրով քանակական և որակական փո-

խակերպություններն ենթարկվող Հայասա—հայերի ցեղային միությունը Հայկական Լեռնաշխարհի արեւմտյան և կենտրոնական մասում, Արիւմ—արմե—արմենների ցեղային միությունը նույն Լեռնաշխարհի հարավ—արեւմտյան մասերում: Ապա տեղի է ունենում այդ երկու ցեղային միությունների համաձուլումը և շրջապատի ցեղային խմբակցությունների հետագա ասիմիլացիան նրանց կողմից: Հայա—հայերի անուշով նոր կազմավորված ժողովուրդն անվանել է իրեն ճաշ, իսկ Արիւմ—արմենների անուշով Խրմեն մեզ կոչել են հարեանները:

3) Ընդունելի պետք է համարել պրոֆ. Գր. Ղափանցյանի այն տեսակետը, թե հայերը ոչ թե հնդեւրոպական, այլ տեղական Փոքր Ասիական-կովկասյան ժողովուրդ են և նրանց լեզուն Փոքր Ասիական-տեղական է, առաջացած խեթական-խուրրիտական, ուրարտական-վրացական էթնիկ աշխարհի արանքում, իսկ հայերեն լեզվի հնդեւրոպական բառարմատները (ոչ թե հետագայում փոխառյալ, այլ հնագույն շերտը, որը 4—5 տոկոսից ավելի չէ), հայերեն ձևավորվող լեզվի օրգանական բաղկացուցիչ մասն են կազմում և մուծված են հայ ժողովրդի կազմի մեջ, մտած տեղական Փոքր Ասիական և եկվոր կիմերա-սկյութական հնդեւրոպական հնագույն էթնիկ էլեմենտի կողմից: Հնդեւրոպական շերտը հայերենի քերականութան մեջ, բացի հիշյալ հնդեւրոպական էլեմենտի ներմուծությունը լինելուց, հայերեն լեզվի զարգացման հետագա ստադիայի արդյունք է հանդիսանում, ինչպես նկատել է Մուր 1928 թ.:

4) Հայաստանի նյութական և հոգևոր կուլտուրան էլ առաջացել է տեղական հողի վրա, տեղական էթնիկ աշխարհում, սերտ կապեր ունենալով վերևում հիշված հարեանների կուլտուրաների հետ, կապեր, որոնք արդյունք են հասարակության զարգացման ընդհանուր պայմանների, զարգացման աստիճանի առավել կամ նվազ ընդհանրությունների և կուլտուրական մերձավորության ու համակցության:

Այս նոր մոտեցումը դեպի քննարկվող հարցը և կուտակված նյութի մեթոդոլոգիական և մեթոդական ճիշտ հիմունքներով կատարվող ուսումնասիրությունը, որին ձեռնարկել են մեր առաջավոր գիտնականները, անհրաժեշտաբար հանգեց հայ ժողովրդի կազմավորման և լեզվական խմբերի մեջ հայերենի բռնած տեղի կարևորագույն հարցերի արմատական վերանայմանը:

Անհրաժեշտ է, որ մեր գիտնականներից ոմանք էլ, գիտա-

կան սառնասրտութեամբ, խիզախ են վերանայել իրենց վերաբերմունքը դեպի հնդկրոպաբանությունն ընդհանրապես և դեպի բուրժուական արևմուտքի և նրա կցորդը կամ նմանակը հանդիսացող մինչև 1910-ական շրջանի հայագիտությունը մասնավորապես: Անհրաժեշտ է, որ նրանք վերանայեն իրենց սեփական տեսակետները հայ ժողովրդի, նրա կուլտուրայի, լեզվի առաջացման և զարգացման հարցերում:

Մեր առջև խնդիր է ծառացած՝ մարքսիստական պատմա-մատերիալիստական աշխարհըմբռնման լույսի տակ վեր հանել հայ ժողովրդի պատմութեան և կուլտուրայի զարգացման օրինաչափությունները, ցույց տալ նրանց ճշգրիտ պատկերը: Այդ բանին զգալի չափով խանգարում են հնացած տրադիցիաներն ու տեսությունները, առաջին հերթին հնդկրոպական և բուրժուանացիոնալիստական հայագիտութեան տրադիցիաների ու տեսությունների դեռ պահպանվող մնացորդները, որոնք պետք է հիմնովին արմատախիլ արվեն:



Տեխ. խմբագիր Մ. Կափլանյան

Սրբազրիչ Մ. Պարոնիկյան

Հանձնված է արտադր. 24/XI 1948 թ., ստորագրված է տպելու 21/XII 1948 թ.

ՎՖ 05323, պատվ. 639, հրատ. № 593, տիրոժ 2000, տպագր. 3 մամ.

մեկ մամուլում 38,400 տպանիշ

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան, 104

ՆԿԱՏՆԵՐ ՎԵՐՊԱԿՆԵՐ

Էջ	տող	տպված է	սխառ է լինի
11	10 Ն.	աճարակացիները	աճարակացիները
25	4 Վ.	բացատրվող	բացատրող
29	18-12 Ն.	հայերեն լեզվի	հայոց լեզվի

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032978

(304)

ԳԻՆԸ 3 Ռ.

